Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

41

Դ. ՉԱՑԵՊՆՅԵԼ

ՈՔՐԻԿ ՊՈՐՈՅՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ



Բագնի Հայոց
Հոիփսիմեան Դպրոց
Գեղարվեստ (Օրիորդաց)

71δ
41

Արտատիպ Մն. Պարտիզոնեանցի

45

6530 MAY 2011

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

891.715
Ջ-41
70 թ
38244

Ա. Դ. Ջացեպինայեա.

ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՅՐԻ

ԱՐԿԱԾՆԵՐԸ

Թարգմ. ռուսերէնից

Բագուի Հայոց
Հրիպսիմեան Դպրոց
Եկեղ.-Ժողով. (օրիորդաց)

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
1904 | 904

2 APR 2013

3271

1:1245

Дозволено Цензурою Тифлисъ 9-го Сентября 1903 г.

3532-84

Ա

ՊԱՐՈՅՐԻ ԸՌԱՒՕՏԸ

Պարոյը Հայկազեանը մի բարի, լաւ երեխայ էր։ Միայն նրա մի պակասութիւնը շատ էր զայրացնում ծնողներին. Պարոյը սաստիկ կամակոր էր և սիրում էր միշտ իւր ասածն անել։ Առաւօտներն երբ դայեակը գալիս էր նրան հագցնելու՝ միշտ միևնոյն պատմութիւնն էր սկսում. «Թող ինձ, Նազլու, գնա՛, ես ուզում եմ քնել, հեռացիր». ասում էր Պարոյը վերմակը գլխին քաշելով և աչքերը ծածկելով՝ քնած ձևանում։ Ահա այսպէս էր անում նա համարեա ամեն օր, մինչև որ հայրիկը կամ մայրիկը գային և ստիպէին վեր կենալ։

Հայրիկը շատ էր բարկանում, պատժում էր նրան—թողնելով երբեմն առանց մրգի, երբեմն առանց զբօսանքի։ Մայրիկը ամեն կերպ աշխատում էր փոքրիկ կամակորին խելքի բերել, բայց նա դարձեալ նոյնն էր անում։ Մի անգամ դայեակը սովորականից վաղ մտաւ ննջարան, զարթեցրեց սանիկին և ասաց.

—Պարոյը, ջանիկս, վեր կաց շուտ. հայրիկդ հրամայեց, որ ինքդ հագնուես։ Վաղը քո ծննդեան տարեդարձն է. դու արդէն եօթը տարեկան ես լինում և հայրիկն ասում է, որ այդպիսի մեծ տղային հագցնելն ամօթ է, թող ինքն իւր համար ամեն բան անի։ Վեր կաց հոգիս, ես ժամանակ չունեմ, իսկ եթէ շուտ չհագնուես՝ հայրիկն էլի կըբարկանայ մեզ վրայ։

—Անհոգ եղիր, Նազլու, ոչինչ չի լինի. ես այս րոպէիս. կուզես ցոյց տամ, ինչպէս շուտ կարող եմ վեր կենալ..... մէկ, երկու, երեք.... ահա ես ոտի վրայ եմ. գուլպաներս տուր։

—Ապրես, Պարոյը ջան. ահա գուլպաներդ և կօշիկներդ։ Բոլոր շորերդ այստեղ աթոռի վրայ են. լուացուելու ջուրն էլ գոլ է. չմոռանաս սանրուել. աղօթքդ ասա և ապա կաթը խմիր. այստեղ բուլկի էլ կայ պաքսիմատ էլ։ Ես կերթամ, ժամանակ չունեմ։

—Լաւ, գնում ես գնա. ինչ լինի լինի, այսօր խելօք կըլինեմ։

Դայեակը միքանի անգամ համբուրեց իւր սանիկին ու գնաց։

Պարոյը մի գուլպան շտապով հագաւ, միւսն էլ ձեռքն առաւ ու պատուհանին մօտենալով սկսեց փողոցը մտիկ տալ։

—Օ՜հօ. երեխայքը կուում են, ասաց նա, այն էլ ո՞նց են կուում..... Բայց գուլպաս մոռացայ. դէ՛ մի հագնեմ պրծնեմ։

Պարոյը հեռացաւ պատուհանից. բայց յանկարծ

փողոցից երաժշտութեան ձայն լսելով, նորից վազեց դէպի պատուհանը և երբ տեսաւ զինուորներին, որ երաժշտութիւնով անցնում էին փողոցով, իհարկէ ամեն բան էլ մոռացաւ։ Հրաշալի ձիու վրայ նստած սպան (օֆիցեր) երբ տեսաւ տկլոր Պարոյրին՝ ծիծաղեց։

—Ա՛յ եթէ ես էլ սպայ լինէի, մտածեց Պարոյրը, և այսպէս ձի հեծնէի ու փետուրներով գլխարկն էլ գլխիս փողոցներով մանգայի, ինչ լաւ բան կըլինէր։ Գլխարկը ես իսկոյն կըշինեմ թղթից։

Պարոյրը մի լրագիր վերցրեց, եռանկիւնի գլխարկ շինեց և ապա փետուրի փոխանակ մի թուղթ կտրտելով նրա մէջ ցցեց. յետոյ աթոռը հայելու մօտ քաշեց, բարձրացաւ վրան, գլխարկը գլխին դրեց և սկսեց բեղերը ոլորել, որ իհարկէ դեռ չէր լուսել։ Ցանկարծ դուռը բացուեց և Պարոյրի հայրը ներս մտաւ։

—Պարոյը, այդտեղ ինչ ես շինում, հարցրեց նա։

—Ա՜խ, հայրիկ, ես իսկոյն.... ես միայն գլխարկն էի չափում գլխիս, որովհետև ես ուզում եմ սպայ դառնալ, իջնելով աթոռից պատասխանեց Պարոյրը։

—Քեզ նման ծոյլերը սպայ չեն կարող դառնալ։ Դայեակը մի ժամ առաջ եկաւ և դու նրան խոստացար մի բոպէում հագնուել, իսկ մինչև այժմ դեռ մի գուլպայ ես հագել։

—Հայրիկ, ես իսկոյն միւսն էլ կըհագնեմ. զինուորները երաժշտութեամբ անցնում էին և ես նա-

յում էի պատուհանից։ Յետոյ գիտես հայրիկ, ինչ չարաճճի երեխաներ կան փողոցում։

—Լաւ, լաւ, այդ բոլորը դու ճաշի ժամանակ կըպատմես, դեռ հագնուիր։ Ժամը 10-ին վարժուհիդ կըգայ, պէտք է պատրաստ լինես, որ նա ստիպուած չլինի սպասել, ասաց հայրիկը և դուրս եկաւ սենեակից։

Պարոյրը սկսեց շտապով հագնուել. բայց դեռ չվերջացրած՝ լսեց որ իրանց զանգը քաշեցին. վարժուհին եկաւ։

Պարոյրը մի կերպ գլուխը սանրեց, առանց հացի մի բաժակ կաթ խմեց ու մտաւ դասարան. այդ ժամանակ միայն յիշեց, որ դասերը չէ կրկնել։

Վարժուհին, օրիորդ Սաթենիկն այն է սկսել էր յանդիմանել Պարոյրին, երբ յանկարծ ներս մտաւ կնքահայրը, որ շատ սիրում էր և երես էր տալիս իւր սանիկին։

—Բարև ձեզ, օրիորդ Սաթենիկ. բարև Պարոյր, գործերդ ինչպէս են. եթէ դասերդ լաւ ես սովորել՝ պարգև կըստանաս, ասաց կնքահայրը։

—Ո՛չ, կնքահայր, այսօր Պարոյրը արժանի չէ ոչ մի պարգևի, ասաց վարժուհին. բացի այն որ դասարան ուշ մտաւ, դասերն էլ բոլորովին չէ պատրաստել։

Պարոյրը կարմրեց և գլուխը կախ դցեց, որովհետև զգում էր իւր մեղքը։

—Ափսոս, շատ ափսոս, գլուխը շարժելով ասաց կնքահայրը. ես դրա ծննդեան տարեդարձի առիթով

վաղն ինձ մօտ մանկական տօն պէտք է սարքեմ, և շատ ցաւալի կըլինի, եթէ Պարոյրին չթողնեն մեզ մօտ գալ։

—Պարոյը, ասաց օրիորդ Սաթենիկը, դուցէ դու կաշխատես վաղուան դասերդ առանց սխալի պատրաստել։

—Իհարկէ՛, օրիորդ, լաւ կըպատրաստէ, ասաց բարի կնքահայրը։ Յոյս ունեմ, որ դուք էլ կըգաք մեզ մօտ, օրիորդ Սաթենիկ, և անպատճառ ճաշի։ Մենք առաջ կըգնանք նաւակով զբօսնելու, յետոյ խմբով անտառը կերթանք, իսկ երեկոյեան հրախաղ կըլինի։

—Ա՜խ, կնքահայր, այդ ինչ ուրախութիւն կըլինի, ինչ լաւ կըլինի, բացագանչեց Պարոյրը և կնքահօր վիզը փաթաթուեց, բայց յանկարծ թանաքամանին դիպչելով, շուռ տուեց և ամբողջ սեղանը թանաքոտեց։

—Ո՜հ, Պարոյր, դարձեալ անկարգութիւն, ինչ անշնորհն ես, ծիծաղելով ասաց կնքահայրը և դուրս գնաց դասարանից։

Պարոյրը գրպանից թաշկինակը հանեց՝ կամենալով թափած թանաքը սրբել. բայց օրիորդ Սաթենիկը շտապով բռնեց նրա ձեռքը և կանչեց աղախնին, որ սեղանը սրբէ։ Սակայն տետրակների ու գրքերի վրայ թանաքի հետքերը մնացին, որ Պարոյրի աշնորհութիւնն էին յիշեցնում։

Բ

ՊԱՐՈՅՐԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ

Նախաճաշից յետոյ երբ Պարոյրը պատրաստւում էր զբօսանքի գնալ՝ ասաց.

—Մ՚այրիկ, քեզանից մի բան եմ խնդրելու և յոյս ունեմ չես մերժի։

—Ասա՛, ինչ ես ուզում, սիրելիս. տեսնեմ ուզածդ մի խելօք բան է թէ ոչ։

—Իհարկէ, մայրիկ ջան, մինչև անդամ շատ խելօք բան է. վաղը, իմ ծննդեան տարեդարձի օրը ինձ մի փողպատ ընծայիր։

—Լաւ։

—Միայն թէ, մայրիկ ջան, թոդ ես ինքս ընտրեմ, որովհետև դու չգիտես թէ ես ինչ տեսակն եմ սիրում։

—Շատ լաւ. գնա՛ հաղնուիր և իսկոյն գնանք առնենք։

—Շնորհակալ եմ, մայրիկ ջան, ասաց Պարոյրը և ուրախ-ուրախ վազեց դայեակին յայտնելու։

Խանութում Պարոյրը նայեց բոլոր փողպատները.

բայց չէր կարողանում ընտրութիւն անել—մէկը շատ մուգ էր թւում, միւսը բաց։ Նա ուզում էր մօրը խնդրել, որ գնան մի ուրիշ խանութ, բայց մայրը մի հոնի գոյն փողպատ ընտրելով ասաց.

—Ահա, Պարոյր, մի հրաշալի փողպատ. ես խորհուրդ եմ տալիս այս վերցնել։

—Շատ լաւ, մայրիկ, գնիր այդ և շուտով տուն գնանք։

—Ինչո՞ւ այդպէս շտապում ես, դեռ մի քիչ զբօսնենք։

—Ո՛չ, մայրիկ, ես ուզում եմ, որ դրա ծայրին դու մի ծաղիկ կարես. ծաղիկով շատ գեղեցիկ է, ես հաւանում եմ։ Վաղը, երբ կնքահօր մօտ գնալու լինենք՝ ես այդ փողպատը կրկապեմ։

Մայրիկը ծիծաղեց և խոստացաւ կարել։

Յաջորդ առաւօտը կարած սիրուն փողպատը մահճակալի գլխին կախած էր։

Եկաւ դայեակը Պարոյրին զարթեցնելու և հետը նշով ու քիշմիշով զարդարած մի մեծ կարկանդակ բերեց։ Հեղինէ քոյրիկը մի զոյգ թենոցի ճարմանդներ (զապոնկէք) ընծայեց եղբօրը. հայրիկը մի մեծ սիրուն պատկերազարդ գիրք, իսկ մայրիկը մի հրաշալի շոգեկառք, որը բանալիով լարելուց յետոյ այնպէս էր սլանում, որ կարծես իսկական շոգեկառք լինէր։

Պարոյրը բոլորովին հիացել էր։ Նա այս անդամ պարմանալի շուտ հագնուեց և մինչև վարժուհու գալը բոլորովին պատրաստ էր։

—Բարև քեզ, Պարոյր, շնորհաւորում եմ ծընն դեանդ տարեդարձը, ասաց վարժուհին։ Ինչպէս տես նում եմ՝ դու վաղուց ես պատրաստուել, շատ լա ես արել։ Յոյս ունեմ այսուհետև խելօք կըլինես. այժ դու արդէն մեծ ես։ Դասդ գիտես արդեօք։

—Գիտէք, օրիորդ Սաթենիկ, երէկ ես բոլորովին ժամանակ չունէի—մօրս հետ գնացել էի փողոց. այ սօր նոյնպէս ժամանակ չունեցայ դասերս կրկնելու, որովհետև իմ ընծաներն էի հաւաքտեղակ անում. բայց գուցէ առանց պատրաստելու էլ գիտեմ։

—Ես քո այդ գուցէին այնքան էլ չեմ հաւատում, գիրքդ բեր և ասա տեսնեմ ինչ ես սովորել։

—Կապիկն ու ակնոցը։

—Դէ լաւ, սկսիր։

—Կապիկն ու ակնոցը..... կրկնեց Պարոյրը հազալով։

—Յետոյ, ասաց վարժուհին ժպտալով։

—Կապիկը երբ թուլացաւ, նրա աչքերը ծերացան։

—Ո՛չ, այդպէս չէ. ասա «կապիկը երբ ծերացաւ, նրա աչքերը թուլացան»։

—Դէ այդ միևնոյնն է, օրիորդ Սաթենիկ, ասաց Պարոյրը։

—Բոլորովին միևնոյնը չէ. այնպէս պէտք է ասել, ինչպէս գրքումն է գրած։

—Կապիկն ու ակնոցը..... Օրիորդ Սաթենիկ, այսօր մայրիկս ինձ մի լարուող շողեկառք ընծայեց։

—Լաւ, լաւ, ասաց օրիորդը, այդ բոլորը յետոյ, դեռ դասդ պատասխանիր։

—Կապիկն ու ակնոցը։ Կապիկը երբ թուլացաւ, կապիկը երբ ծերացաւ..... թուլացաւ։

—Այդպէս չէ, Պարոյր։

—Դէ լաւ, այժմ լաւ ասեմ. կապիկը երբ ծերացաւ, նրա աչքերը թուլացան. մարդկանցից նա լսել էր..... Օրիորդ Սաթենիկ, ոտերը շարժելով հարցրեց Պարոյրը, մի՞թէ կապիկները մարդոց ասածը կարող են հասկանալ։ Գիտէք, օրիորդ, հայրիկն ինձ մի գիրք ընծայեց, այնտեղ զանազան կապիկներ կան նկարած, ուզում էք ցոյց տամ։

—Պարոյր, ես տեսնում եմ, որ դու դասդ բոլորովին չես սովորել, ասաց օրիորդ Սաթենիկը. տես որ հետևեալ դասի համար շատ լաւ իմանաս. ահա չորս տող էլի աւելացնում եմ։ Սկսենք թուաբանութեան դասը։ Երկու անգամ ութը քանի՞ կանէ։

—Կարծեմ տասն և հինգ, ասաց Պարոյրը։

—Տասն և վեց, ասաց օրիորդ Սաթենիկը։ Երկու անգամ երկու։

—Այդ արդէն ես գիտեմ՝ չորս է։ Օրիորդ Սաթենիկ, վեց-վեց ինչ կըլինի։

—Տասն և երկու։

—Ա՜յ չիմացաք, ուրախ-ուրախ բացագանչեց Պարոյրը, ոչ թէ տասն և երկու կըլինի, այլ փորը քաղցած կըլինի. որովհետև ով որ քաղցած է, ասում է «փորս վեց-վեց է անում»։

—Կատակների ժամանակ չէ, Պարոյր, խիստ

ձայնով նկատեց վարժուհին. ինչպէս տեսնում եմ աղիւսակն էլ չես կրկնել, և ես շատ պիտի ցաւեմ, եթէ քո ծննդեան տօնին ստիպուած լինեմ քեզ պատժել։

—Դէ, ես ինչ անեմ, ասաց Պարոյրը շրթունքներն ուռցնելով։

—Ի՞նչպէս թէ ինչ անես. մի՛թէ քեզ համար ամօթ չէ այդ։

—Ի՞նչ էք զահլա տանում. դուք սաստիկ ցանկանում էք ինձ պատժել. բայց ո՛չ, այսօր ինձ չեն պատժի։ Այսօր մինչև անգամ ես բոլորովին չպէտք է պարապէի, իսկ դուք դեռ ուզում էք ինձ պատժել։

—Պարոյր, այդ ինչպէս ես խօսում, լռի՛ր, բաւական է. ցաւում եմ քեզ վրայ, եթէ ոչ կերթայի հայրիկիդ կրգանգատուէի։

—Դուք չար էք, այդ էլ կանէք։

Հայրիկը կողքի սենեակից լսելով Պարոյրի պատասխանները՝ յանկարծ ներս մտաւ։

—Այդ ինչ եմ լսում, այդ ինչ յանդուգն խօսքեր ես ասում։ Իսկոյն ներողութիւն խնդրիր օրիորդ Սաթենիկից։

Պարոյրն անշարժ կանգնած էր։ Հայրիկը նորից կրկնեց իւր պահանջը։ Պարոյրը դարձեալ լուռ էր։

—Պարոյր, վերջին անգամ եմ ասում, գնա՛ վարժուհուց ներողութիւն խնդրիր. իսկ եթէ պատուէրս չկատարես, ես քեզ խիստ կրպատժեմ։

Պարոյրը երեսը ձեռներով ծածկեց և շարունակեց լուռ մնալ։

—Որ այդպէս է, դու կնքահօր մօտ չես գնայ, ասաց հայրիկը։

Պարոյրը սկսեց լաց լինել։ Օրիորդ Սաթենիկը գրկեց նրան և ասաց.

—Պարոյր, դէ՛, ասա՛ ներողութիւն օրիորդ և բոլորը կրվերջանայ, մի՛թէ դժուար է այդ, դէ՛ միայն մի խօսք ասա՝ ներողութիւն։

Բայց փոքրիկ կամակորը չլսեց ու սկսեց աւելի խիստ լալ։

—Թողէ՛ք դրան, օրիորդ Սաթենիկ, ասաց հայրիկը. թո՛ղ այնքան մենակ նստի այստեղ, մինչև որ խելքի գայ և ներողութիւն խնդրէ ձեզանից։ Եւ հայրիկն ու վարժուհին միասին դուրս եկան դասարանից։

Գ

ՊԱՐՈՅՐԻ ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Կէս ժամի չափ Պարոյրը սեղանի առաջ նստած՝ նայում էր գրքերին ու տետրակներին և գլուխը կախած խրգրզում էր։ Յանկարծ դուռը բացուեց և ոտների մատների վրայ քայլելով ներս մտաւ Պարոյրի տասը տարեկան քոյր Հեղինէն, որ մի սիրուն սևաչեայ աղջիկ էր։

—Պարոյր, սիրելիս, կամացուկ ասաց քոյրը, փաթաթուելով եղբօրը. հայրիկից ներողութիւն խնդրիր, օրիորդ Սաթենիկը գնաց։ Հայրիկն ու մայրիկը շատ տխուր են. ես էլ առանց քեզ կնքահօր մօտ չեմ գնայ։

—Իսկ դու կարծում ես ինձ շատ դուրեկան է տանը նստել։ Այս բոլորը վարժուհու մեղն է։

—Սխալւում ես, Պարոյր, օրիորդը ինքն էլ շատ ցաւում էր վրադ. նա մինչև անգամ հայրիկին խնդրում էր քեզ ներել։ Դու դասդ բոլորովին չես գիտեցել, բայց նա էլի չէր ուզում քեզ պատժել։ Հայրիկն ինքը լսել էր, թէ ինչպէս կոպտութեամբ դու նրան պատասխաններ ես եղել տալիս, ուստի դու

անպատճառ ներողութիւն պէտք է խնդրէիր օրիորդից։

—Այո, այո, ձեր կարծիքով ամեն բանում ես եմ մեղաւոր։

—Իհարկէ մեղաւորը դու ես, Պարոյր, և եթէ դու հայրիկից ներողութիւն խնդրես՝ նա քեզ իրաւունք կըտայ գնալ կնքահօր մօտ, ապա թէ ոչ ամբողջ օրը տանը կըմնաս։

—Ես ներողութիւն չեմ խնդրի, ես մեղաւոր չեմ։

—Ա՜խ, Պարոյր, միթէ չես ամաչում. ապա քո կարծիքով ով է մեղաւոր. մի լաւ մտածիր—դասերդ չէիր սովորել, վարժուհուն կոպիտ պատասխաններ ես տուել, այժմ էլ կամակորութիւն ես անում։ Աւելի լաւ է, գնա հայրիկի մօտ և ասա. «ներիր, հայրիկ ջան»։ Այն ժամանակ լաւ կըլինի, բոլորը կուրախանան և մենք միասին հրաւէրքին կըգնանք։ Վեր կաց, Պարոյր ջան, գնանք միասին հայրիկի մօտ. ես ինքս կասեմ, որ ահա Պարոյրը եկել ներողութիւն է խնդրում քեզանից. դու էլ հայրիկին կըհամբուրես և ամեն ինչ կըվերջանայ։ Դէ՛ վեր կաց։

Պարոյրը տատանուելով վեր կացաւ աթոռից ու կամաց գնաց քրոջ յետևից։ Բայց հէնց որ դուռը բացուեց և Պարոյրը հայրիկին տեսաւ՝ իսկոյն յետ փախաւ ու կանգնեց դասարանի անկիւնում։

—Հեղինէ, եկ նախաճաշելու, ասաց հայրը։

Հեղինէն նստեց նախաճաշելու, իսկ փոքրիկ կամակորը դարձեալ մենակ մնաց։

Միքանի բոպէից դայեակը մտաւ Պարոյրի սե-

նեակը և մատուցարանով նրա համար նախաճաշիկ բերեց։

—Է՜հ Պարոյր, այս ինչ բան արիր քո ծննդեան օրը. փոխանակ ուրախանալու, այդպէս տխուր ես անց կացնում այս ազիզ օրը։ Եկ նախաճաշդ կեր և յետոյ գնա հայրիկից ներողութիւն խնդրիր, ասա, «հայրիկ ջան, այլևս այդպէս բան չեմ անի, խնդրեմ ինձ էլ տանէք կնքահօր մօտ»։ Իսկ ես նոր շորերդ կըպատրաստեմ. փայլուն կօշիկներդ կըբերեմ, կարովի փողպատդ էլ կըկապես։ Դէ կեր, հոգիս, թէ չէ կսառի։

—Ի՜նչ անբախտ եմ ես, Նազլու, ինձ ոչ ոք չի սիրում։

—Ախ, սիրելիս, ինչ ես ասում, քեզ և Հեղինիկին հայրիկն ու մայրիկը աչքի լոյսի պէս են սիրում։ Յանցանք ես գործել, դէ ներողութիւն խնդրիր, պըրծաւ գնաց։ Հեղինիկը քո պատճառով լաց է լինում, իսկ հայրիկն ու մայրիկը սաստիկ տխուր են։ Կամ ինչպէս պէտք է դու տանը մենակ մնաս, երբ բոլոր երեխաները պէտք է գնան այնտեղ ուրախանալու։ Ախար կըհարցնեն, թէ Պարոյրը ո՞ւր է, և կիմանան, որ Պարոյրը կամակորութեան պատճառով պատժուած է և տանն է մնացել։

—Այժմ արդէն ուշէ, հայրիկն այլևս ինձ չի նեբի, այդ ես գիտեմ. նա շատ գոհ կըլինի, որ ես տանը մենակ մնամ։

—Մեղաւորը դու ես Պարոյր. դու կամակոր ես։ Աւելի լաւ է, սիրունիկս, գնա հայրիկից ներողու-

թիւն խնդրիր, յետոյ եկ հագնուենք։ Ես գնամ Հեղինիկին օգնեմ հագնուելու։

—Ասում եմ չեմ գնայ, կրկնեց Պարոյրը չարացած։

—Քո կամքն է, կուզես այդպէս տանը նստիր։

Դայեակը հեռացաւ ու մի կէս ժամից յետոյ Պարոյրը լսեց, որ ծնողներն ու Հեղինիկը պատրաստւում են գնալու։ Մայրիկը դուռը բացեց ու ասաց.

—Դէ՛ Պարոյր, շո՛ւտ արա, եկ ներողութիւն խընդրիր, դեռ ուշ չէ, հայրիկը կընեբէ։

Պարոյրը գլուխը բացասաբար շարժեց։ Նախասենեակի դուռը փակուեց և ամեն ինչ լռեց։ Պարոյրը մօտեցաւ պատուհանին, տեսաւ հեռացող կառքը և սկսեց դառը հեկեկալ։

1002
L094

Դ

ՊԱՐՈՅՐԻ ԶԲՕՍԱՆՔԸ

Պարոյրը վերջապէս ձանձրացաւ լաց լինելուց, մօտեցաւ պատուհանին, սկսեց ապակիների վրայ մատներով ածել ու անց ու դարձ անողներին նայել։ Յետոյ յիշելով իւր նոր խաղալիքներն՝ ընտրեց նրանց միջից շոգեկառքը և սկսեց խաղալ։ Այս միջոցին դայեակը ներս մտաւ ու ասաց.

—Դու քո ասածին մնացիր, Պարոյր, հայրիկն էլ իւր ասածն արաւ։ Հիմա լա՛ւ եղաւ։

—Շատ պէտքս չէ. հէնց տանն էլ կըմնամ, ասաց կամակորը։

—Դէ՛ ինչ եղաւ եղաւ, էլ բանը բանից անցել է։ Բայց այդ շոգեկառքը իսկապէս հրաշալի բան է. կարծես իսկական լինի։

—Նազլու, կուզես պատկերներ ցոյց տամ։

—Պատկերները յետոյ ցոյց կըտաս, այժմ սիրելիս, դու ինքդ քեզ համար մենակ խաղա. ես պէտք է լուացարարի մօտ գնամ։ Զուտով էլի այստեղ կըլինեմ. եթէ քեզ մի բան հարկաւոր լինի, խոհարարուհուն ասա։ Ես քեզ համար շաքարահաց կըբերեմ. խելօք կաց սիրունիկս։

—Լաւ Նազլու. բայց դու սերուցով շաքարահաց առ ինձ համար, գիտես այն սպիտակ ու վարդագոյն շաքարահացերը։

—Շատ լաւ, աչքիս լոյս, մէկը սպիտակ կըբերեմ, միւսը վարդագոյն։

Դայեակը դուրս եկաւ, շալը գլխին առաւ ու սանդուխքով իջաւ։ Այդտեղ նա պատահեց դռնապանի կնոջը։

—Բարև քեզ, Մադթաղ. երեխային վերևը մենակ թողի, տանը ոչոք չկայ, մի րոպէ պէտք է լուացարարի մօտ գնամ։

—Ներս արի խնդրեմ, թէյը պատրաստ է, մի բաժակ խմիր։

—Չէ սիրելիս, ժամանակ չունեմ, վախենում եմ, Պարոյրս մենակ է, չլինի թէ մի փորձանք պատահի։

—Ինչո՞ւ են նրան մենակ թողել. երևի հիւր են գնացել։

—Վարժուհուն կոպիտ պատասխան էր տուել, դրա համար պատժել են։ Ամենքն ամբողջ օրով կընքահօր տուն գնացին, իսկ Պարոյրին չտարան։

—Ինչ չա՛ր է եղել, բայց վրան նայելիս մարդ կարծում է թէ Աստուծոյ դառն է։

—Դեռ փոքր է. լաւ երեխայ է, միայն մի քիչ կամակոր է. ամեն բանում իւր ասածն է անում։ Ուղիղն ասած՝ հայրն էլ կամակոր մարդ է, ճիշտ որ կացինը քարին է դիպել։

—Ա՛յ թէ ինչ։ Խաթայ են այս երեխաներն էլի։ քանի դեռ փոքր են՝ ծնողների համար հոգս ու չարչարանք են, մեծանում են՝ էլի նրանց հոգսից մարդ չէ ազատւում։ Նազլու, երբ վերադառնաս մի բոսկէ մտիր, միասին թէյ խմենք. ամուսնուս տեղ ուղարկեցին, իսկ ես մենակ չեմ սիրում թէյ խմել։

—Ընդհակալ եմ, Մագթաղ ջան, այսօր ժամանակ չունեմ, զուռը բանալով ասաց Նազլուն ու հեռացաւ։

Մի քիչ խաղալուց յետոյ՝ Պարոյրը սկսեց սենեակներում թափառել։ Ննջարանում նա անկողնի վրայ նկատեց իւր նոր շորերը, փողպատը և փունջերով գեղեցիկ կօշիկները սիրուն դարսած։ Պարոյրը հետաքրքրուեց փորձել, թէ շորերն ինչպէս են սազում իրան։ Երբ բոլորը հագաւ ու զուգուեց, հայելիի առաջ կանգնեց ու նայեց։ «Ափսոս չէ՛, մտածեց նա, որ այս սիրուն հագուստով ինձ ոչոք չտեսնի։» Եւ իսկոյն որոշեց մինչև դայեակի վերադարձը գնալ մի քիչ զբօսնել։

Պարոյրը բոլորովին մոռացել էր, որ ինքը պատժուած է։ Նա գլխարկը ծածկեց, ձեռնափայտը ձեռքն առաւ, նախասենեակից դուրս եկաւ և սանդուխքն իջաւ առանց ոչոքի պատահելու։ Դռնապանը բացակայ էր, իսկ նրա կինը երևի զբաղուած էր. այնպէս որ ոչոք չտեսաւ, թէ ինչպէս Պարոյրը փողոց դուրս եկաւ։ Եղանակը հրաշալի էր։ Պարոյրը ցանկութիւն զգաց երկար զբօսնել ու այնպէս տուն վերադառնալ, որ դայեակը արդէն եկած լինի։

Հազիւ էր Պարոյրը տանից մի քիչ հեռացել և ահա պատահեց մի տիկնոջ, որ երկու փոքր երեխայի հետ գնում էր։ Պարոյրը ձեռնափայտը ճոճելով նրանց յետևից գնաց, երևակայելով՝ թէ ինքը մի մեծ մարդ է։

Այսպէս սա մինչև քաղաքային ծառաստանը (պարկ) գնաց նրանց յետևից։ Այստեղ տիկինը նստեց մի նստարանի վրայ և սկսեց կարդալ, իսկ երեխաները սկսեցին ձի-ձի խաղալ, Պարոյրին էլ հրաւիրելով միանալ իրանց հետ։

Պարոյրը ամեն բան մոռացաւ և ձիու նման խրախճանքով սկսեց ուրախ-ուրախ վազվզել։

Երկար ժամանակ երեխաները զուարճանում էին։

Սկսեց ցրտել։ Տիկինը վեր կացաւ, երեխաներին կանչեց, որ տուն գնան. իսկ Պարոյրը երկար վազվզելուց յոգնած և քրտնած նստեց նստարանի վրայ։ Նա զգաց որ քաղցած է, մանաւանդ որ ճաշի ժամանակը վաղուց անցել էր, իսկ նախաճաշ էլ նա կարգին չէր կերել։ Ձեռքը տարաւ գրպանը և տեսաւ, որ փողի քսակն այնտեղ է։ Պարոյրը մի գրուանքայ կեռաս գնեց, նստեց և մեծ ախորժակով սկսեց ուտել։ Այդ ժամանակ նա նկատեց մի 13 տարեկան տղայ ցընցոտիներով, որ կանգնած անդադար իրան էր նայում։ Պարոյրը բարի երեխայ էր. նա մտածեց որ այդ տղան էլ ուզում է կեռաս ուտել։

—Կեռաս ուզում ես, հարցրեց Պարոյրը։

—Սաստիկ քաղցած եմ, բայց փող չունեմ, պատասխանեց տղան։

—Սպասիր, ես քեզ համար իսկոյն կառնեմ. բայց գիտես, ես էլ քաղցած եմ. լաւ կըլինի, եթէ կեռասը հացով ուտենք։ Ահա քեզ 10-ը կոպէկ, գնա երկու բուլկի առ, այստեղ էլ մէկ գրուանքայ կեռաս ունենք, լաւ կուտենք, կըկշտանանք։

Տղան փողը վերցրեց և մի ակնթարթում վազեց 2 բուլկի բերեց. կողք կողքի նստեցին և մեծ ախորժակով սկսեցին ուտել։

—Ի՞նչ համով է, չէ. ես կըցանկանայի ամեն օր այսպէս ճաշել, ասաց Պարոյրը։ Իսկ դու հաւանում ես։

—Իհարկէ հաւանում եմ, ահա 2 օր է՝ ոչինչ չէի կերել։ Ձնորհակալ եմ քեզանից պուճուր աղայ, փորս կշտացաւ, թէ չէ անօթութիւնից հոգիս դուրս էր գալիս։

—Ահա քեզ մի աբասի էլ տամ. աւելի կըտայի, բայց ինքս էլ շատ չունեմ, մի մանէթանոց է մնում։ Անունդ ինչ է։

—Ստեփան։

—Իսկ իմ անունը Պարոյր է։ Այժմ արդէն տուն գնալու ժամանակ է։ Մնաս բարեաւ Ստեփան։

Ե

ՊԱՐՈՅՐԸ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է

Պարոյրը ձեռնափայտը ձեռքին առաջ գնաց, բայց երբ յետ նայեց՝ նկատեց որ այլևս ճանապարհը չէ յիշում, մինչև անգամ չգիտէ որ կողմը գնայ։ Մանրավաճառներն ու կեռաս ծախողն արդէն գնացել էին և այլևս ոչոք չկար։ Արդէն մութն ընկել էր և ոչ մի տեղ լապտեր չէր երևում։ Պարոյրը սարսափեց և ոչ մի ելք չգտնելով, յուսահատ նստեց նրստարանի վրայ և բարձրաձայն լաց եղաւ։

—Ինչու՞ ես լալիս, Պարոյր, ասաց յանկարծ մի ձայն։

Պարոյրը յետ նայեց և տեսաւ Ստեփանին։

—Չեմ իմանում որ կողմը գնամ, ճանապարհը կորցրել եմ։ Խնդրում եմ ինձ տուն տանես, Ստեփան։

—Ես ինքս ճանապարհները չեմ իմանում. իսկի չգիտեմ, թէ որտեղ պէտք է գիշերեմ։

—Ապա դու որտեղից ես եկել, հարցրեց Պարոյրը։

—Գիւղից եմ եկել, որ մի գործ գտնեմ ինձ համար, բայց ոչինչ չյաջողուեց։

—Ո՞ր գիւղից ես եկել։

—Բ. շէնից եմ եկել։ Բաւական մեծ է մեր գիւղը։ Ոչ հայր ունեմ, ոչ մայր. ուզում եմ մի տեղ ծառայութեան մտնել։ Իսկ դու հայր ու մայր ունե՞ս։

—Հայր էլ ունեմ, մայր էլ, դայեակ էլ, Հեղինէ քոյրիկ էլ։ Ես դուրս եկայ մի քիչ զբօսնելու, այժմ ճանապարհս կորցրել եմ. չգիտեմ հիմա ես ինչ անեմ, ուր գնամ, ասաց Պարոյրը և լաց եղաւ։

—Ի՞նչ ես լաց լինում, արտասուքով ոչնչի չես։

—Ապա ինչ պէտք է անեմ։

—Գնանք այստեղից. այստեղ այնպէս մութ է, կարծես անտառ լինի, փողոցում լոյս է։ Արի մի կառք վարձիր կամ անցորդներից հարցրու և քեզ ցոյց կըտան ձեր տունը։

—Իրաւ ես ասում, Ստեփան, կառք նստենք ու գնանք մեր տուն։ Հայրիկիս ու մայրիկիս կըխնդրեմ, որ քեզ մեզ մօտ պահեն։

—Դէ գնանք։ Ո՞ր փողոցի վրայ էք ապրում։

—Ն. փողոցի վրայ մենք սեփական տուն ունենք։

Ստեփանը Պարոյրի ձեռքը բռնեց և միասին գնացին։

Երեխաները երկար թափառեցին, բայց ճանապարհը չգտան։ Մութն արդէն այնպէս էր պատել, որ բացի ծառերից նրանք այլևս ոչինչ չէին տես-

նում։ Ոչ մի շշուկ անգամ չէր լսւում։ Ծառաստանի միւս կողմը սկսւում էր դաշտը։ Պարոյրը սաստիկ յոգնել էր և հազիւ էր ոտները քաշ տալիս։

—Ես ճանապարհը չեմ գտնում, ասաց Ստեփանը. գնալով-գնալով գուցէ այնքան հեռանանք, որ մինչև առաւօտ ստիպուած լինենք թափառելու։

—Այժմ ինչ անենք, ինչ, կրկնում էր Պարոյրը։ Ի՞նչպէս ցաւում եմ հայրիկիս ու մայրիկիս համար. ինչեր են մտածում նրանք իմ մասին, Ստեփան։ Ինչ սև օր էր այսօր ինձ համար. առաւօտեան չարութեան համար ինձ պատժեցին. ամենքը հիւր գնացին՝ իսկ ինձ դայեակի հետ տանը թողին. դայեակը գնաց լուացարարի մօտ, իսկ ես հագայ նոր շորերս և մենակ դուրս եկայ զբօսնելու։ Ինձ երբէք չեն թողնում մենակ ման գալ, որովհետև փողոցները լաւ չեմ ճանաչում։ Խ՜եղճ հայրիկ և մայրիկ ջան. ինչպէ՞ս ամաչում եմ և ցաւում, թէ ինչու առաւօտեան ներողութիւն չխնդրեցի ձեզանից. այն ժամանակ այս փորձանքը չէր պատահի։ Ա՜խ երանի մի տուն հասնեմ, այլևս երբէք կամակորութիւն չեմ անի։ Ես յոգնեցի, Ստեփան..... այլևս չեմ կարող գալ։

—Դէ լաւ, մի քիչ նստենք խոտի վրայ։

Երեխայքը նստեցին։

—Ստեփան, եթէ յանկարծ գայլերը գան մեզ ուտեն։

—Ի՞նչ գայլեր, ինչ ես ասում. գայլերը երբէք քաղաքի մօտերքը չեն գալիս։

—Ի՞նչ ահռելի մութ գիշեր է, ոչ մի աստղ չէ երևում երկնքում։

—Որովհետև ամպերը բոլոր երկինքը պատել են, ասաց Ստեփանը սարսուռ զգալով։

Երեխայքն երկար մնացին նստած, վախենալով շարունակել ճանապարհը, որովհետև չգիտէին ո՞ր կողմը գնան։ Յանկարծ մոտեցող կառքի մի ձայն լսուեց։ Երեխաները վեր թռան և բղաւելով կառքի կողմը վազեցին։

—Ո՞վ է, կանգնի՛ր, սպասի՛ր։

Ձին կանգնեց և երեխայքը հազիւ նկատեցին մի սայլ, որի մէջ նստած էր մի գիւղացի։

—Ո՞վ էք, ի՞նչ էք ուզում, թափառաշրջիկներ, զոչեց նա։

—Ապէր, մենք թափառաշրջիկներ չենք, մենք մոլորուել ենք, ճանապարհը կորցրել. մեզ քաղաք հասցրու։

—Քաղա՞ք. ի՞նչ էք հրամայում։ Ես կառապան չեմ։ Մինչև քաղաք էլի մի 7 վերստ կըլինի, իսկ ձիս յոգնած է, մանաւանդ վաղն էլի նորից պէտք է բանի։ Դուք ո՞ւմ տանից էք։

—Խնդրում եմ մեզ մինչև Ն. փողոցը հասցրու. ես իմ մանէթ կըտամ քեզ, խնդրում էր Պարոյրը։

—Ուրեմն դու հարուստ ես եղել այ թափառական. որ այդպէս է՝ ես 3 ռուբլով էլ չեմ գնայ քաղաք։ Եթէ ուզում էք՝ նստէք սայլում, ես ձեզ մեր գիւղը կըտանեմ և մի մանէթ կառնեմ ձեզանից։

—Իսկ գիւղը հեռո՞ւ է, հարցրեց Ստեփանը։

—Հեռու է, ապա ի՞նչ է, պատասխանեց գիւղացին։

—Գնանք Պարոյր, գոնէ մենակ չենք լինի. դաշտումը գիշերը սարսափելի է։

Պարոյրը շուտ համաձայնեց և երկուսով նստեցին սայլում, որը և շարունակեց ճանապարհը։ Գիւղացին այլևս ոչ մի խօսք չասաց. երեխայքն էլ չէին վստահանում խօսել և շուտով քուն մտան։

Զ

ՊԱՐՈՅՐԸ ԱՆՏԱՌՈՒՄ

Պարոյրը միայն առաւօտեան դէմ զարթեց և բոլորովին չէր հասկանում, թէ ո՞րտեղ է ինքը և ինչ է պատահել։ Նա պառկած էր ծառի տակ խոտի վրայ և շուրջը բացի ծառերից ու թփերից ուրիշ ոչինչ չէր երևում։ Արևը նոր էր դուրս եկել, թռչունները ուրախ ծլվլում էին։ Պարոյրը կարծում էր, թէ այս բոլորը երազ է. բայց երբ սարսուռ զգաց՝ ոտի կանգնեց և սկսեց յիշել բոլոր պատահածը։

—Աստուած իմ, ինչ պէտք է լինի իմ վիճակը, ասում էր խղճուկը։ Ո՞ւր են Ստեփանն ու այն գիւղացին, որ մեզ սայլումը նստեցրեց. երևի նրանք ինձ մենակ թողին այս անտառում ու գնացին։ Ես մենակ ճանապարհն ինչպէս գտնեմ։ Ա՜խ իմ սիրելի ծնողներ, մայրիկ ու հայրիկ ջան։ Աստուած իմ, օգնիր ինձ։ Պարոյրը ծնկաչոք դառն արտասուքն աչքերին սկսեց աղօթել։

—Հա՛, զարթեցիր պուճուր աղայ, յանկարծ լսուեց Ստեփանի ձայնը։

—Ստեփան ջան, դու այստեղ ես. ինձ չես թողել, հեռացել. ես այնպէս սաստիկ վախեցայ։

—Ի՞նչպէս թողնեմ, խղճուկիդ։ Դու միամիտ կաց չեմ թողնի քեզ։ Իսկ կառապանը այ ինչ խաղ խաղաց մեր գլխին. բերեց-բերեց, մէկ էլ անտառի միջին կանգնեց, թէ—«չէ, եղբայր, ասում է, իջէք հեռացէք ինձանից. ով գիտէ դուք ովքեր էք։ Ձեր պատճառով մի փորձանքի մէջ էլ չընկնեմ»։ Ինչքան խնդրեցի, որ մեզ մինչև գիւղը հասցնէ, լսել չուզեց. սայլից իջաւ, վերցրեց քեզ և դրեց ծառի տակը. դու մեռելի նման քնած էիր, ոչինչ չէիր իմանում. ինձ էլ հրեց, դուրս ձգեց, ինքը սայլը նստեց ու քշեց գնաց։

—Ո՜հ Ստեփան, ինչպէս սարսափում եմ. ուրեմն մենք անտառումն ենք գիշերել. հարցրեց Պարոյրը։

Այդպէս է երևում. քեզ համար այնքան սարսափելի չէր, որովհետև դու քնած էիր. իսկ ես ամբողջ գիշերը կողքիդ նստած արթուն մնացի, չէի կարողանում քնել. սաստիկ երկիւղի մէջ էի։ Հէնց որ սկսեց լուսանալ՝ իսկոյն գնացի շրջակայքը նայելու։ Ոչ մի տեղ ճանապարհ չէր երևում. վախենում էի քեզանից շատ չհեռանամ, մի գուցէ մոլորուեմ ու քեզ կորցնեմ։ Բայց և այնպէս մի շաւիղ գտայ. գուցէ այս շաւիղը մեզ մի ճանապարհի վրայ հանէ։ Տես որքան մորի կայ այստեղ. ինչ խոշոր են ու հասած։ Դու երևի քաղցած ես։ Երէկ դու ինձ կեռասով հիւրասիրեցիր, այսօր ես քեզ մորիով կըհիւրասիրեմ։

Միայն խնդրեմ ներողամիտ եղիր, բուլկի չունեմ, կատակով ասաց Ստեփանը։

—Այո, քաղցած եմ, բայց մրսում էլ եմ։

—Դէ գնանք մորիով նախաճաշիկ արա. արևն էլ լաւ կըտաքացնէ քեզ և կըլաւանաս։ Երեխաները սկսեցին հաւաքել և ուտել մորին, որ շատ առատ էր։ Պարոյրը մորին շատ հաւանեց, թէպէտ թաժա հացն ու կաթը այժմ աւելի մեծ ախորժակով կուտէր։ Սիրտը ճմլւում էր, երբ յիշում էր, թէ ինչպէս տանեցիք գլուխները կորցրած իրան են փնտռում. ինչպէս վարժուհին կըգայ «Կապիկն ու ակնոցը» հարցնելու. ինչպէս կնքահայրն ու բոլոր բարեկամները կիմանան, որ Պարոյրը կորել է. ինչպէս կըբարկանան խեղճ դայեակի վրայ, որ իրան մենակ է թողել։ Քանի անգամ խեղճ երեխան դառը ախ էր քաշում և ուզում էր լաց լինել, բայց Ստեփանը աշխատում էր հանգստացնել նրան, ասելով. «արտասուքից օգուտ չկայ, գիւղի պառաւների նման ախ ու վախ անելը չի օգնի». և հաւատացնում էր նրան, որ ինքը ինչպէս էլ լինի անպատճառ կըգտնի Պարոյրի ծնողներին։

—Ահա շաւիղն էլ երևաց, կընշանակէ այստեղ մարդիկ անց ու դարձ են անում. մենք ևս այս շաւիղով կերթանք և երևի մի տեղ կըհասնենք, ասաց Ստեփանը։

—Ա՜խ, եթէ մենք մի բարի մարդու պատահէինք, որը մեզ այս անտառից դուրս բերէր և մեր տուն հասցնէր՝ ես իմ բոլոր սիրած բաներս նրան

կընծայէի. երևի հայրիկս էլ նրան բան կընծայի։ Հայրիկս քեզ էլ կրվարձատրէ Ստեփան, որ ինձ մենակ չես թողել։

—Զարմանալի տղայ ես, Պարոյր, ես ինքս անչափ ուրախ եմ, որ մենակ չեմ. ինչպէս կարող էի քեզ մենակ թողնել, երբ ինքս էլ ոչ մի տեղ չունեմ գնալու։ Որբի կեանքը շատ դժուար է։

—Ապա առաջ որտեղ էիր ապրում։

—Մի մօրաքոյրը միայն ունէի, նա էլ անցեալ շաբաթ վախճանուեց, այժմ այլևս ոչ մի օթևան չունեմ։ Ուզում էի մեր գիւղի նախարարած դառնալ, բայց արդէն գարունքից վարձել էին ուրիշին։ Ողորմութիւն խնդրելն էլ ամօթ է. ասացի—քաղաք գնամ, մի գործ որոնեմ։ Երկու օր ման եկայ, բայց գործ չգտայ, քիչ մնաց քաղցած մեռնէի։ Երէկ միայն դուինձ հաց տուիր, կերակրեցիր. այդ լաւութեան համար ես երբէք քեզ չեմ մոռանայ։

—Կարդալ գիտես Ստեփան։

—Կարդալ-գրել գիտեմ. երկու տարի սովորել եմ ուսումնարանում. հաշիւ էլ գիտեմ, մի քանի հատ էլ աղօթք։ Եթէ ես մի խանութում տեղ գտնէի, այնպէս կըծառայէի, որ ամենախստապահանջ խանութպանն էլ ինձանից գոհ կըմնար։

—Ես հաւատացած եմ, Ստեփան, որ հայրիկս անպատճառ քեզ կօգնէ, միայն թէ շուտով կարողանանք տուն հասնել։

—Մի տեղ կըհասնենք էլի։ Անտառումն էլ շատ լաւ է, ազատ կարող ես շնչել։ Իսկի քաղաքի հետ

չեմ փոխի։ Մեր գիւղի մօտ էլ այսպիսի մի անտառ կայ և անտառում միայն մի խրճիթ կայ, ուր ապրում է անտառապահը։

—Տես, տես Ստեփան մի խրճիթ է երևում հեռում. չլինի թէ դա էլ անտառապահի խրճիթ է, ուրախութեամբ բացագանչեց Պարոյրը։

—Հէնց ուղիղ որ պահապանի խրճիթ է։ Այժմ լաւ եղաւ. կըգնանք անտառապահին կըհարցնենք քաղաքի ճանապարհը։ Ինչ ուրախութիւն է. փառք Աստուծոյ։ Դէ գնանք շուտով։

Է

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՆՏԱՌԱՊԱՀԻ ԽՐՃԻԹՈՒՄ

Պարոյրն ու Ստեփանն ուրախ-ուրախ վազեցին դէպի անտառապահի խրճիթը, որի դռներն ու պատուհանները փակ էին ու ոչոք էլ չէր երևում մէջը։

—Է՜ հէ՛, ինչպէս երևում է խրճիթում ոչոք չկայ, ասաց Ստեփանը։

—Այժմ ինչ պէտք է անենք. մեզ տուն ով կը-հասցնէ, ասաց Պարոյրն ու սկսեց լալ։

—Դէ՛ հերիք է լաս, հոգիս տրորեցիր։ Լացից ինչ օգուտ. բաս ես էլ նստեմ կողքիդ ու սկսեմ գոռալ, ինչ դուրս եկաւ դրանից։ Փառք Աստուծոյ մի օթևան ենք գտել. այս գիշեր այստեղ կըպատսպարուենք, իսկ վաղը Աստուած ողորմած է, մի ճար կըգտնենք։

Պարոյրն խսկոյն լռեց. Ստեփանի խօսքերն ու համոզուած ձայնը նրան հանգստացրին։ Ստեփանը խրճիթի շուրջը պըտտեց և մտածում էր մի կերպ խրճիթը մտնել։

—Դուռը դրսից բանալիով միայն կարելի էր

բանալ, իսկ ներսից առանց այդ էլ կըբացուէր։ Տես այստեղ դոմ էլ կայ, եթէ չկարողանանք խրճիթը մտնել՝ այստեղ կարող ենք գիշերել։

Ստեփանը մտաւ դոմը, ուր ինչպէս երևում էր, մօտ ժամանակներում կով էր կապած եղել։ Այնտեղ նա մի կացին գտաւ, որով հեշտութեամբ վերև քաշեց պատուհանի շրջանակը, մտաւ խրճիթը և դուռը ներսից բանալով՝ ուրախ-ուրախ կանչեց.

—Պարոյր, ներ՛ս արի. ահա մեզ և տուն. շնորհաւորում եմ նոր բնակարանդ։

Պարոյրը այս անշուք խրճիթը մտաւ ու տեսաւ սև ու մրոտ պատեր, մի մեծ վառարան, հասարակ սեղան, նստարան ու պահարան։ Ստեփանը պահարանը բացեց և երբ տեսաւ կլոր սև հացը, բարձրաձայն կանչեց.

—Պարոյր ջան, մենք իսկոյն մի փառաւոր ճաշ կուտենք, երևի դու այնպէս քաղցած ես, որ այս սև հացը գաթայի պէս կուտես։ Մօտ եկ սեղանին, ահա դանակ. մեր գիւղական հացի համը տես. ես հօ քաղցից մեռնում եմ։

Ստեփանը սեղանը թևերով սրբեց և ճարպիկութեամբ չոր հացից մի քանի կտոր կտրեց, դարսեց Պարոյրի առաջ և փայտէ աղամանն առաջ քաշեց. ապա մի կտոր հաց վերցրեց, վրան աղ ցանեց և ջրի դոյլը (վեդրо) վերցնելով, ասաց Պարոյրին, որ ինքը իսկոյն աղբիւրից ջուր կըբերէ։ Պարոյրը մեծ բաւականութեամբ ուտում էր հացը աղով և միևնոյն ժամանակ զարմանում, թէ ինչու՞ իրանց տանը այս-

պիսի համեղ հաց չեն ունենում։ Սառը ջուրն էլ ուղ-
ղակի դոյլից խմելով, Պարոյրը բոլորովին զուարթա-
ցաւ ու սիրտ առաւ։

—Փառք Աստուծոյ կշտացանք, երեսը խաչակն-
քելով ասաց Ստեփանը. այժմ գործի կպչենք։ Վեր-
ցրու այս գաւաթը և գնա մօրի հաւաքիր, աղբիւրի
մօտ շատ-շատ կայ, միայն տես հեռու չգնաս. իսկ
ես սենեակը կարգի կբերեմ, վառարանը կվառեմ—
փայտ շատ կայ, լուցկի էլ կայ. գիշերը տաք կըքնենք։

—Հապա տուն երբ կերթանք, Ստեփան։

—Մի քիչ համբերիր Պարոյր. թող մի քիչ տունը
կարգի բերեմ, յետոյ քեզ կերթողնեմ այստեղ, իսկ ես
կըգնամ ճանապարհ փնտռելու։

—Ես ոչ մի դէպքում այստեղ մենակ չեմ կա-
րող մնալ։

—Եթէ քեզ հետս տանեմ, իմացիր, որ շատ բան
չենք շինի. դու մէկ կասես յոգնեցի, մէկ էլ լաց կը-
լինես։ Իսկ առանց քեզ ես մի րոպէում ամեն կող
կըվազեմ. գուցէ և անտառապահին կըհանդիպեմ կա-
մօտիկ մի գիւղ կըգտնեմ։

—Իսկ եթէ դու անտառում մոլորուես, ես հ
այստեղ մենակ կըկորչեմ։

—Դու էլ բան ասացիր. քաղաքումն աւելի հեշ
կարելի է մոլորուել, քան թէ անտառում։ Ճանապար
հին ես նշաններ կանեմ։ Դէ գնա մի քիչ զբաղուի
մորիով. միայն տես, էլ չլաս։

Ստեփանը սկսեց սենեակը կարգի բերել. վառ
բանը վառեց, կաթսայով ջուր դրեց կրակի վրա

յետոյ մտաւ նկուղը, այնտեղ գտաւ թարմ ձուաներ,
գետնախնձոր, սոխ և էլի մի կլոր հաց։ Ստեփանի ու-
բախութեանն էլ չափ չկար։ Յետոյ պահարանի տակը
տեսաւ մի պռեխիկ թէյաման, երեք հատ թէյի բա-
ժակ, և թղթի մէջ փաթաթած քիչ թէյ ու միքանի
կտոր շաքար։

Այս լաւ բան եղաւ, ուրեմն թէյ էլ անուշ կա-
նենք, ասում էր Ստեփանն ինքն իրան։ Ընտառա-
պահի մտքովն էլ չի անցնի, որ իւր տանը հիւրեր
կան ու կարգադրութիւններ են անում։

Ստեփանը բոլոր գործերը վերջացրեց, թէյամա-
նի մէջ թէյ ածեց և դուրս եկաւ Պարոյրին փնտռե-
լու, որ խրճիթից ոչ հեռու մորի էր ժողովում։

—Ի՞նչ քաջ ես Պարոյր, այդ ինչ շատ ես ժո-
ղովել։ Այդքան մորիին մեր քաղաքացի պարոնները
15 կոպէկ կըտային։ Ես առաջ շատ անգամ այդպէս
ժողովել եմ ու տարել քաղաք ծախելու։ Պարոյր,
հիմա գնանք աղբիւրը լուացուենք. խրճիթում սա-
պոն և երեսսրբիչ էլ գտայ, յետոյ գնանք խրճիթը և
տես ինչպէս կըհիւրասիրեմ քեզ։

Ստեփանը լաւ դայեակի նման Պարոյրի երեսը
լուաց, մազերը սանրեց, յետոյ տարաւ խրճիթը և
ցոյց տուեց այն բոլոր մթերքները, որ գտել էր ան-
տառապահի նկուղում. ապա ուրախ նստեցին և հա-
մով թէյ խմեցին։ Երբ թէյը վերջացրին, Ստեփանը
պատրաստուեց գնալ ճանապարհը որոնելու։

—Ես այստեղ չեմ մնայ Ստեփան, ասաց Պա-
րոյրը, ես մենակ վախենում եմ։

—Ինչու՞ ես վախենում. ցերեկ է, գիշեր չէ, ումից ես վախենում։ Դեռ մութը չընկած՝ ես այստեղ կըլինեմ։ Եթէ ուտել ուզենաս, ահա հաց. այստեղ սոխ էլ կայ, սոխով ու աղով հացը շատ համեղ է։ Դու քիչ տաշեղ հաւաքիր. յետոյ նորից մորի ժողովիր. մինչև իմ գալը դրանով կըզբաղուես ու չես ձանձրանայ։ Երբ մթնի, մտիր խրճիթը, դուռը լաւ փակիր, աղօթքդ արա ու պառկիր. իսկ ես դարձեալ պատուհանից ներս կըմտնեմ։

—Եթէ՝ անտառապահը վերադառնայ հօ ինձ աւազակ կըկարծէ և կըսպանէ։

—Տէր Աստուած. ո՞վ պէտք է քեզ աւազակ կարծէ, երբ դու մի փետրած հաւի նման բան ես և ուրիշ ոչինչ։ Աւելի լաւ է եթէ անտառապահը գայ, դու նրան բոլորը կըպատմես. թէ ինչպէս այստեղ ընկար և կասես, որ եթէ քեզ ծնողներիդ մօտ տանի, նրանք շատ փող կընծայեն իրան։ Միայն տես առանց ինձ չգնաս, սպասիր մինչև ես վերադառնամ, ես էլ պէտք է քաղաք գամ։

—Ես առանց քեզ ոչ մի տեղ չեմ գնայ, Ստեփան, միայն դու շուտ վերադարձիր, ճանապարհդ չկորցնես։

—Դու մի վախենա. գնալիս ճանապարհին պատահած թփերի ճիւղերը կըկտրատեմ, որ նշան լինի և նորից նոյն ճանապարհով կըվերադառնամ, այդ ես գիտեմ։ Դէ մնաս բարեաւ, քաջ եղիր, ոչոքից մի վախենա և տես՝ չլաս։

Ստեփանը ջուր խմեց, մի կտոր հաց առաւ կըռան տակը և ճանապարհ ընկաւ դէպի անտառի խորքը։

Ը

ՍՏԵՓԱՆԸ ՃԱՆԱՊԱՐՀ Է ՓՆՏՌՈՒՄ

Ստեփանը ման էր գալիս անտառի շաւիղներով, որոնք բոլորն էլ տանում էին դէպի միևնոյն խրամատը (փորած երկար փոս)։ Ստեփանը համոզուելով՝ որ այդ անտառում ոչ մի բնակութիւն չկայ, երկար թափառելուց յետոյ յուսահատուած, կոտրտած թփերի նշաններով, քայլերը նորից ուղղեց դէպի անտառապահի խրճիթը։

Արևը մայր մտաւ։ Անուշահոտութեամբ լցուած օդը զովացաւ։ Բազմաթիւ սոխակներ և զանազան թռչուններ սկսեցին երգել իրանց քաղցր երգերը։ Այս սիրուն բոպէին անտառում այնքան լաւ և դուրեկան էր, որ Ստեփանը ուրախութեամբ կըմնար անտառապահի խրճիթում, քանի որ այնտեղ եղած ուտելու պաշարը կըբաւականանար։ Սակայն Պարոյրի դրութիւնը նրան շատ էր անհանգիստ անում, ուստի վճռել էր ամեն ջանք գործ դնել և նրան իւր ծնողների մօտ տանել, հասցնել։ Նա իւր մասին բո-



լորովին չէր մտածում, որովհետև նրա այսօրուայ կեանքն առաջ անց կացրած կեանքից աւելի լաւ էր։ Վաղը առաւօտեան հակառակ կողմը կերթամ, մտածում էր նա. անկարելի է, որ այս մօտերքում մի գիւղ կամ մի անց ու դարձի ճանապարհ չլինի։ Պարոյրին էլ հետս կըվերցնեմ. մենակ թողնել լաւ չէ։ Նա ոչինչ չէ իմանում, չէ հասկանում։ Ով գիտէ այժմ արդէն տրզզոցը գցել է։ Ստեփանը քայլերն արագացրեց, թէպէտ սաստիկ յոգնել էր, որովհետև առաւօտից մինչև երեկոյ առանց հանգստանալու ման էր եկել։ Խրճիթը շուտով երևաց։ Պարոյրը շէմքումը նստած աչ ու ձախ էր նայում և ամեն մի շշուկի ականջ դնում։

—Պարոյր, ահա ես եկայ։ Առանց ինձ ինչպէս անց կացրիր, հօ չտխրեցիր։

—Ո՜հ, ինչ սարսափելի է անտառում մենակ լինել։ Ի՜նչ ուրախ եմ Ստեփան, որ եկար. ես վախենում էի խրճիթը մտնել պառկել։ Ասա՛ խնդրեմ, գըտա՞ր անտառապահին։

—Ոչոքի չտեսայ։ Այս կողմը ամբողջապէս խիտ անտառ է, ոչ մի ճանապարհ չկայ։ Ամբողջ օրը իզուր շրջեցի։ Վաղը մենք միասին կերթանք հակառակ կողմը. իսկ այժմ լաւ կըլինի ընթրենք և պառկենք քնելու։ Արի մի լաւ ձուածեղ շինենք և օրհնենք այս տան տիրոջը, որ մեզ համար պաշարեղէն է պատրաստել։ Բայց եթէ ինքը վերադառնայ՝ երևի շատ էլ շնորհակալ չի լինի, որ նրա ունեցած չունեցածը փորերս ենք քաշել։

—Ես իմ ռուբլիս կըտամ նրան։

—Ես էլ իմ աբասին կաւելացնեմ և բանը կը-
ղըստուի, ծիծաղելով ասաց Ստեփանը։ Ինչ քաջ ես,
Պարոյը, այստեղ փայտ ես պատրաստել։

—Տես, Ստեփան ես սունկ էլ եմ հաւաքել։

—Ցոյց տուր տեսնեմ, չլինի թէ թունաւոր լի-
նեն։ Չէ, սոքա լաւ տեսակից են, ուտել կարելի է։
Մի քիչ սպասիր, իսկոյն կրակ կանեմ և մի լաւ ա-
պուր կեփեմ։ Դէ վառարանում փայտ դարսիր, ահա
և լուցկին, սովորիր ինչպէս պէտք է կրակ վառել։
Հ՛ը, ինչ ես սըփրթնել ու դողում տերևի նման։

—Յաստիկ մրսում եմ, գլուխս էլ ցաւում է։

—Դէ, գնա քիչ թէք ընկիր, իսկ ընթրիքից յե-
տոյ վառարանի մօտ կըպառկեցնեմ քեզ քնելու։

—Ինչ բարի ես դու Ստեփան, ես առանց քեզ
ինչ պէտք է անէի։

—Լաւ, լաւ, պառկիր մինչև ես բոլորը պատ-
րաստեմ։

—Այսօր դու շատ ես աշխատել Ստեփան, երևի
յոգնել ես, բայց ինչ անեմ, որ չեմ կարող քեզ օգ-
նել։ Երանի թէ ես էլ քեզ նման խելօք լինէի։

—Կրմեծանաս, կըխելօքանաս։ Դու ասա փառք
տանք Աստծուն, որ երէկ ծառի տակին քաղցած գի-
շերեցինք, իսկ այսօր կուշտ ու տաք նստած ենք
սենեակում։ Թէ ինձ կըհարցնես, անտառում այսպիսի
կեանքը հրաշալի է։ Ես երբ մեծանամ՝ անտառա-
պահ կըդառնամ։ Դու էլ ինձ մօտ այն ժամանակ հիւր
կըգաս և մենք միասին կերթանք զբօսնելու։ Բայց

շատ կափսոսամ, եթէ քեզանից բաժանուեմ. մենք
լաւ բարեկամացանք։ Ես երեխայ շատ եմ սիրում։
Շատ անգամ դիւղումը, երբ երեխաներն ուզում էին
զայրացնել ինձ՝ դայեակ էին ասում, բայց ես բոլո-
երովին չէի վիրաւորուում, որովհետև խելացէս ե-
ղեխայ շատ եմ սիրում։

Այսպէս խօսելով՝ Ստեփանը վառարանը վառեց,
սունկը լուացը, սոխ կոտորեց, ածեց պղինձը, աղ ա-
ռաջեց, ջուրը ածեց և դրեց կրակի վրայ. յետոյ առան-
ձին թաւի մէջ էլ ձուածեղ շինեց։

—Ահա ընթրիքը պատրաստ է, նստիր Պարոյը,
ուտենք. տես ինչ լաւ ապուր եմ եփել։

—Շատ համեղ է. ասա խնդրեմ, ով է սովորե-
ցրել քեզ կերակուր եփել։

—Մի թէ մեծ դիտութիւն է հարկաւոր դրա հա-
մար։ Զատկական տօներին, երբ ես Պօղոս քեռուս
մօտ էի ծառայում՝ ապուր էլ էի եփում, խորոված
էլ էի անում։ Վաղը փլաւ կեփեմ, տես ինչ լաւը կը-
լինի։ Դէ կեր, կեր սիրելիս, դու բոլորովին նուազել
ես, մի քիչ կազդուրուիր, որ վաղը նորից գնանք
թափառենք, ճանապարհը գտնենք։

—Աւելի լաւ է՝ ես կըպառկեմ Ստեփան, ուտե-
լու ախորժակ չունեմ։

—Այդ ինչպիսին ես տո՛. ուտելու շնորհք էլ չունես.
դէ գնա՛ շորերդ հանիր ու պառկիր վառարանի մօտ։

Ստեփանն օգնեց Պարոյրին՝ շորերը հանեց ու
պառկեցրեց, ինքն էլ ընթրիքի մնացորդները հաւա-
քեց ու պառկեց քնելու։

Թ

Մ Ր Ր Ի Կ

—Վեր կաց, Պարոյր, ասաց Ստեփանը նկատելով որ ընկերը գլուխը վեր է բարձրացրել։ Այսօր նորից պէտք է շրջագայենք. վեր կաց, ես իսկոյն նախաճաշիկը կըտաքացնեմ։

—Ինչու այսպէս մութ է. արևն էլ չէ երևում։

—Ամպած է, անձրև պէտք է գայ, ասաց Ստեփանը։

—Ապա մենք ինչպէս կերթանք։

—Ոչինչ, շաքարից չենք շինած, որ հալուենք. անձրևը կըթրջէ, արևն էլ կըչորացնէ։

Պարոյրը կամաց կամաց վեր կացաւ և սկսեց հագնուել. զըզգզուած մազերը հարթեց և գնաց առուակը լուացուելու։ Գլուխը դարձեալ ցաւում էր, ոտքերը դողում էին։

—Ի՞նչ կասէր դայեակս, եթէ ինձ այժմ այսպէս տեսնէր—շորերս անմաքուր, գուլպաներս պատառոտած, կօշիկներս էլ ծակծակուել են։ Երանի իմանայի, թէ այժմ մեր տանն ինչ են անում։

Ա՜խ Աստուած իմ, երբ ես մեր տունը կըհասնեմ։ Այնպէս սաստիկ է ցաւում գլուխս, որ եթէ տանը լինէի՝ մայրիկս չէր թողնի անկողնից վեր կենալու։

Ստեփանը նախաճաշն արդէն տաքացրել էր և առաջարկում էր Պարոյրին, որ ուտեն ու յետոյ ճանապարհ ընկնեն։

—Դէ այժմ բարով գնանք։ Ահա պայուսակում հաց, գետնախնձոր և սոխ եմ դրել ճանապարհի համար։ Դու դուրս արի, որ ես դուռը ներսից այնպէս կողպեմ, ինչպէս առաջ կողպած էր, գուցէ այլևս չենք վերադառնայ. իսկ ես պատուհանից դուրս կըգամ։

—Ստեփան, տես ինչ սև-սև ամպեր են հաւաքուել, անպատճառ անձրև կըգայ։

—Անպատճառ փոթորիկ կըլինի. եթէ կուզես այսօր էլ այստեղ մնանք։

—Ո՛չ, ոչ, վախեցած ասաց Պարոյրը. աւելի լաւ է շուտ գնանք։

Երեխաները քայլերն ուղղեցին դէպի այն կողմը, որտեղից եկել էին առաջին օրը։ Սև-սև ամպերից անտառը համարեա մթնել էր. փայլակն երբեմն-երբեմն շանթում ակօսում էր նրան։ Ստեփանը շատ էր աշխատում համոզել Պարոյրին, որ յետ դառնան խըրճիթը։

—Ո՛չ, Ստեփան, շարունակենք ճանապարհը. դու ինքդ ես ասում, շաքարից չենք որ հալուենք։ Գուցէ պատահենք մէկին, որ հենց այսօր մեզ տուն տանի։

Միքանի բոպէից ամպը սաստիկ որոտաց և անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին թափուել։

—Վերադառնանք խրճիթը, Պարոյր. ինչպէս տեսնում եմ, սաստիկ փոթորիկ է լինելու, ասում էր Ստեփանը. երբ եղանակը պարզուի՝ նորից ճանապարհ կընկնենք։

—Չէ, չեմ ուզում, տես անձրևն արդէն դադարեց, ասաց Պարոյրը։

Եւ անձրևի կաթիլներն իսկապէս սկսեցին նոսրանալ և մինչև անգամ արև դուրս եկաւ։ Երեխայքը խրախուսեցան և շարունակեցին իրանց ճանապարհը։ Շատ գնալուց յետոյ վերջապէս նրանք դուրս եկան կանաչ, ծաղկազարդ դաշտը։ Սակայն մեր հոգատար Ստեփանը չէր մոռանում անցած ճանապարհի վրայ նշանները թողնել. նա երբեմն թփի ճիւղերն էր կըտրատում, երբեմն բարձր խոտերի գլխներից փնջեր կապում։ Այս ճանապարհը գուցէ մեզ էլի հարկաւոր լինի, մտածում էր Ստեփանը։

—Պարոյր, դու հազիւ ես քաշ տալիս ոտներդ, երևի յոգնել ես, եկ այստեղ նստենք, մի քիչ հանգստանանք։

Պարոյրը ոչ թէ նստեց, այլ ուղղակի վայր ընկաւ խոտերի մէջ, զանգատուելով սաստիկ գլխացաւից, և իսկապէս այնպէս գունատուել էր խեղճ երեխան, որ մեռելի նման էր դարձել։

Է՜հ, բարեկամս, ինչպէս տեսնում եմ՝ դու կըհիւանդանաս, և այն ժամանակ չգիտեմ ես ինչ պէտք անեմ։

Մրրիկը սկսուեց։ Սաստիկքամի բարձրացաւ, ծառերը սկսեցին ճրռճռալ։ Ամպը այնպէս խիստ որոտաց, որ մինչև անգամ Ստեփանը ցնցուեց. հանեց գլխարկը և երեսը խաչակնքեց։ Պարոյրը վախեցած վեր թռաւ և սկսեց այս ու այն կողմը նայել։

—Ստեփան, մենք կայծակնահար կըլինենք։

—Ես էլ այդ էի ասում, որ մնայինք խրճիթում մինչև եղանակը պարզուէր։ Դէ, ինչ անենք. արի վազէվազ գնանք. տես քամին յետևիցն է, այնպէս որ մեզ հեշտութեամբ առաջ կըտանի մինչև մեր խրճիթը։

Ստեփանը Պարոյրի ձեռքիցը բռնեց, տեսաւ որ նա ամբողջ մարմնով դողում է և հազիւ է կարողանում ոտքի վրայ կանգնած մնալ։

—Պարոյր, դու դողում ես, ման դալ չես կարող, եկ քեզ շալակեմ տանեմ։

Ստեփանը չոգեց, առաւ Պարոյրին ուսի վրայ, պարկն էլ ձեռին և շտապ—շտապ առաջ գնաց։ Պարոյրը ամուր փաթաթուել էր նրա վզով։

—Է՜հ դու քնքոյշ պարոնիկ, ինչ թեթև ես, կարծես փետուր լինես։ Ի՜նչ քո բանն էր մենակ տանից դուրս գալ ու կորչել։ Այժմ գնանք խրճիթը, դու մնա այնտեղ, իսկ ես մենակ կերթամ ճանապարհը փընտռելու։

Պարոյրը չէր պատասխանում. նա գլուխը դրել էր Ստեփանի ուսին և կարծես քնել էր։ Քամին սաստիկ սուլոցով փչում էր և ծառերն օրօրում, բարձր խոտն էլ ալիքների նման այս ու այն կողմն էր գնում։ Անձրևն աւելի սաստկացաւ և առուակի նման թափ-

ւում էր Պարոյրի մէջքին ու Ստեփանի վզին։ Ստեփանը իւր բեռը ուսին դժուարութեամբ էր առաջ գնում։ Վերջապէս նա հասաւ անտառապահի խրճիթը։ Պարոյրը անզգայ կպել մնացել էր Ստեփանի ուսերին և ձայն-ծպտուն չէր հանում։ Ստեփանն ստիպուած կուչ եկաւ, կռացաւ գետին և մի կերպ նրան վայր իջեցրեց։ Պարոյրը սփրթնած դարձեալ անշարժ էր մնում։

—Ստուած իմ, այժմ ես ինչ անեմ, ասում էր Ստեփանը զարհուրած։

Պատուհանից շտապով ներս գնաց խրճիթը, դուռը բացեց, վերցրեց Պարոյրին ներս տարաւ, դրեց մահճակալի վրայ, դողդոջուն ձեռքերով հանեց նրա թաց շորերը և մօտն ընկած կոշտ տոպրակով սկսեց շփել Պարոյրի ամբողջ մարմինը։ Բանից երևաց որ այդ շփումը շատ մեծ օգուտ բերեց։

Պարոյրի մարմինը սկսեց կարմրել և դեղնած երեսն էլ վարդի գոյն ստացաւ. կոպերը սկսեցին շարժուել և Պարոյրն աչքերը բանալով՝ շունչ քաշեց։ Բարեբախտաբար խրճիթը շատ տաք էր։ Ստեփանը տոպրակով ծածկեց Պարոյրին, նորից վառարանը վառեց, ինքն էլ շորերը հանեց, բոլորը լաւ քամեց և կրակի առաջ փռեց չորանալու։ Անձրևը դադարեց։ Արևը դուրս եկաւ։ Կարծես մրրիկը հէնց դրա համար էր, որ խեղճ երեխաներին թրջէ և նորից խրճիթը քշէ։

Ժ

ՊԱՐՈՅՐԻ ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Ստեփանը Պարոյրից չէր հեռանում. նա ամեն կերպ աշխատում էր զբաղեցնել և սիրտ տալ նրան։ Խեղճ Պարոյրը աչքերը յառել էր մի կէտի և տնքում էր. յետոյ սկսեց զառանցել—երբեմն իւր դայեակին էր կանչում, երբեմն մօրը, շուտ-շուտ ջուր էր պահանջում, ապշած աչ ու ձախ նայում, իսկ Ստեփանին այլևս չէր ճանաչում։

Ստեփանը գնաց մարաքից մաքուր խոտ բերեց, Պարոյրի տակը փռեց, անկողին շինեց, արդէն չորացած շապիկը նորից հագցրեց և գլխատակն էլ խոտէ բարձ շինեց։ Այնպիսի հանգամանքներում սրանից աւելի բան չէր կարելի անել։

Ստեփանն այնքան սիրեց իւր փոքրիկ ընկերոջը, որ պատրաստ էր նրա համար իւր կեանքը զոհել, միայն թէ կարողանար նրան մի կերպ օգնել. ինքը համարեա քաղցն էլ, քունն էլ մոռացել էր։

Այսպէս անցաւ երեք օր։ Պարոյրը երբեմն զառանցում էր, երբեմն աչքերը շուարած խղճալի հայացքով մնում էր միակերպ։ Վերջապէս չորրորդ օրը երեկոյեան Պարոյրը կարծես քիչ հանգստացաւ։ Ստեփանն էլ սաստիկ յոգնած՝ կուչ եկաւ նրա անկողնի առաջ ու պինդ քնեց։

Ստեփանը երբ առաւօտեան վեր կացաւ և Պարոյրին անկողնում տեսաւ նստած՝ սաստիկ ուրախացաւ։ Պարոյրը նայեց իւր քնաթաթախ գրգռուած մազերով խնամակալին ու ժպտաց։ Ստեփանը վեր թռաւ տեղից արտասուքն աչքերին, փաթաթուեց, գրկեց Պարոյրին և սկսեց համբուրել նրա դեղնած այտերն ու նիհար ձեռքերը։

—Պարոյր ջան, ուշքի եկար։ Ո՞հ ինչպէս վախեցրիր ինձ։ Ես կարծում էի թէ կըմեռնես։ Մի քիչ բան կեր սիրելիս. ուզում ես քեզ համար թէյ պատրաստեմ իսկոյն։

—Այո՛, թէյ տուր ինձ Ստեփան, նուազած ձայնով՝ ասաց Պարոյրը։

—Իսկոյն, հոգիս։ Փառք Աստուծոյ, այժմ քեզ լաւ ես զգում։ Բայց ես ինչ երազ տեսայ—իբր թէ մեր գիւղումն ենք, հանգուցեալ մօրաքոյրս մօտենում է ինձ և ասում. «Ստեփան, ինչու՞ ես մոռացել անտառի միւս մասի պահապան զինուոր Վրթանէսին. վեր առ Պարոյրին և տար նրա մօտ։» Արթնացայ յանկարծ. կարծես ինձ մէկը բօթեց և սարսուռ եկաւ վրաս։ Աստուած իմ, ինչպէս մինչև հիմա գլխի չընկայ. չէ՞ որ այժմ ես կարողանում եմ յիշել թէ մենք ո՞ր կողմից եկանք. քանի՞ անգամ եմ անցել ես այս տեղով, հէնց այս խրճիթի մօտով։ Այժմ

ես յիշում եմ, թէ ո՞ր կողմն է մեր գիւղը, նրա մօտի քաղաքացու ամարանոցը և Վրթանէս անտառապահի խրճիթը։ Վրթանէս քեռին միշտ մեզ է գալիս անտառի այս ու այն մասում. բայց այժմ ո՞ւր է կորել, որ մեզ չէ պատահում։ Նա խելօք մարդ է, մեր դարդին դարման կանէր ու վաղուց քեզ քաղաք կը-տանէր։ Ի՜նչ տխմարն եմ ես. ինչպէս չճանաչեցի այս անտառը։ Ես իսկոյն կերթամ Վրթանէս քեռու մօտ. բայց քեզ ինչպէս մենակ թողնեմ։

—Ո՛չինչ, Ստեփան, դեռ լոյս է, ես չեմ վախենում. ինձ թէյ խմեցրու և շուտ գնա. ես ուզում եմ մեր տունը գտնել։ Ասա խնդրեմ, քաղաքը ձեր գիւղից ո՞րչափ հեռու կըլինի։

—Քսան վերստ կըլինի։ Օ՜հ, ես յիմարս, յիմարս, կրկնում էր Ստեփանը և Պարոյրի համար թէյ ածում։ Գոնէ Վրթանէս քեռին այս կողմով անցնէր։ Դէ Պարոյր, հանգիստ պառկիր, ահա քեզ հաց և թէյ. գուցէ ծարաւես։ Իսկ ես շտապով կըգնամ կամ Վրթանէս քեռուն կըբերեմ հետս կամ ամարանոցի տիրոջը էրխնդրեմ, որ քեզ իրանց մօտ տանեն։ Այնտեղի տիկինը շատ բարի է, ես նրան ճանաչում եմ, նա քեզ կըգթայ. ես մինչև անգամ կարծում եմ, որ քեզ համար ձի կուղարկեն, որ ոտով չգնաս։

Ստեփանը սեղանն առաջ քաշեց, թէյը դրեց վրան, մի կտոր էլ հաց կտրեց ու դրեց մօտը. ապա գլխարկը ծածկեց և ուրախ—ուրախ ճանապարհ ընկաւ դէպի Վրթանէս քեռու խրճիթը։ Այժմ նա արդէն իմանում էր, թէ ո՞ր կողմը գնայ. այլևս ոչ նշան-

ներ էին հարկաւոր և ոչ շաւիղներ։ Քառորդ ժամից յետոյ նա դուրս եկաւ բաց դաշտը, որտեղից արդէն երևում էր գիւղը իւր սպիտակ գմբէթաւոր եկեղեցիով։ Ստեփանը սկսեց բոլոր ոյժով վազել և երբ հասաւ ծայրի խրճիթին, բոլորովին կարմրատակած, հևալով ներս ընկաւ։

—Քեռակին, ո՞ւր է Վրթանէս քեռին, բղաւեց Ստեփանը։

—Ի՞նչ ես աղաղակում, տո, կրակ ընկած, ինչպէս վախեցայ, բարկացած ասաց քեռակինը, որ թոնրի մօտ նստած հաց էր թխում։

—Քեռակին ջան, շուտ ասա, ո՞ւր է նա։

—Ի՞նչ պէտք է անես, փուչ կենդանի, անտառը հօ կրակ չէ՞ ընկել, ինչ ես լեզուդ կախ ձգել հեռում։

—Մի բարկանար, քեռակին, ասա իսէր Աստուծոյ, ո՞ւր է Վրթանէս քեռին։

—Եկեղեցի է գնացել. չէ՞ որ այսօր կիրակի է։

Ստեփանը շտապով դուրս թռաւ բակից։

—Չլինի՞ թէ իսկապէս հրդեհ կայ, վախեցած ասաց Զուշանն ու դուրս վազեց, որ տեսնէ ինչ կայ դուրսը։ Ստեփանը բոլոր ուժով վազում էր դէպի եկեղեցին։ Գուցէ անտառն է այրւում, ասում էր Զուշանն ինքն իրան։ Ահա մի շաբաթ է Վրթանէսը այնտեղ չէ եղել։ Կամ գուցէ աղէն է կանչում. չկարողացայ տեղովը հարցնել։ Անպիտանը խելառ է. ախար ծեծող չունի է։ Ո՜նց է վազում թշուառականը։

Երբ Ստեփանը եկեղեցուն մօտեցաւ՝ առաւօտեան ժամն արդէն վերջացել էր և ժողովուրդը ցըր-

ւում էր։ Ստեփանը գլխարկը հանեց և մտաւ եկեղեցի։ Վրթանէս քեռին երեցփոխի մօտ կանգնած՝ զրոյց էր անում։

—Քեռի, ասաց Ստեփանը թևից քաշելով, ես քեզ բան ունեմ ասելու։

—Ի՞նչ ես ուզում։

—Աբի, դուրսը կասեմ։

—Այդ ինչի նման ես Ստեփան, մի՞թէ կարելի է այդպէս անկարգ ու կեղտոտ մտնել Աստուծոյ տունը. ո՞ւր ես քաշում ինձ։

—Վրթանէս քեռի, գնանք դուրս, իսէր Աստուծոյ, ես ուզղակի անտառից քեզ մօտ եմ գալիս, գործ կայ։

—Անտառից ես գալիս. ինչ գործ է այդ։

Ստեփանը սկսեց պատմել իւր և Պարոյրի պատմութիւնը և այնպէս շտապ-շտապ վրայ տալով, որ Վրթանէսը ոչինչ չհասկացաւ։

—Դու ցնդել ես Ստեփան, ինչպէս տեսնում եմ։ Այդ ո՞ւր ես կորել. քեզ վաղուց փնտռում եմ, համարեա մօրաքրոջդ մահուան օրից սկսած։ Դու խելօք և լաւ տղայ էիր. ուզում էի օգնականս լինես. իսկ դու քաղցից, թէ վշտից խելքդ բոլորովին կորցրել ես։

—Ես խելքս չեմ կորցրել քեռի ջան, դու մի լաւ լսիր. շուտով գնանք անտառապահի խրճիթը. տղան այնտեղ մենակ է ու շատ հիւանդ է, էլ երեսին գոյն չէ մնացել։

—Այդ ինչ տղայ է, աղայի երեխաները բոլորն էլ աղջիկ են։

—Քաղաքիցն է, անունը Պարոյը է, հարուստ մարդու որդի է, շատ լաւ շորեր ունի հագած. նրանց տունը ամենագլխաւոր փողոցի վրայ է, ասաց Ստեփանը։

—Ապա ինչպէս է ընկել պահապանի խրճիթը։

—Ճանապարհը կորցրել է, ասում եմ քեռի, մենք երկուսով միասին էինք, ես էլ անտառը չճանաչեցի. երազումս մօրաքոյրս եկաւ և ճանապարհը սովորեցրեց։

—Ախը ասում եմ խելքդ կորցրել ես, տես ինչեր ես դուրս տալիս։ Գնա՛ որդի մեր տուն, քեռակինդ մի բան կըտայ ուտելու, կեր և ապա պառկիր քնիր, դուցէ այդ բոլորն անցնի։

—Վրթանէս քեռի, աղաչում եմ, հաւատա՛ խօսքերիս, ես բոլորը ուղիղ եմ ասում։

—Ապա ո՞ւր էիր կորել չքացել, որ քո մասին ոչ մի տեղեկութիւն չունենք։

—Գնացել էի քաղաք գործ դտնելու. ես քեզ բոլորը մանրամասն կըպատմեմ, միայն իսէր Աստուծոյ այժմ շուտ գնանք Պարոյրի մօտ, վախենում եմ՝ չլինի մի բան պատահի, նա մենակ է։

—Այսօր կիրակի է, որդի, դեռ պատարագին կերթամ, յետոյ կըճաշեմ և ապա անտառ կըգնամ։ Աղայի հետ որսի էի գնացել, երէկ երեկոյեան միայն վերադարձայ, դեռ կարգին չեմ էլ հանդստացել։

—Քեռի ջան, ախար նրան այդպէս թողնել չի կարելի. ես կերթամ ամարանոցի տիրոջ մօտ, նա բարի է, կըգթայ Պարոյրին։ Եթէ այնպէս թողնենք՝

երեխան կըմեռնի, ինչ պէտք է անենք այն ժամանակ։

Ստեփանը սկսեց լաց լինել և իւր կեղտոտ ձեռներով արցունքը սրբել, որով և ամբողջ երեսը կեղտոտեց։

—Տո՛, ոնց ես գնալու աղոնց տուն, նրանք քեզ պէս փնթիին վզակոթին տալով դուրս կանեն։ Մի կարգին խօսել էլ չես իմանում, կարծես խելառ ես։ Աղէն դեռ քնած կըլինի. նա ուշ է վեր կենում։ Եթէ ասածդ ուղիղ է, պէտք է ձին լծել և անտառից երեխին այստեղ բերել։

—Հաւատացնում եմ քեռի, որ բոլորը ճիշտ եմ ասում. ուրեմն թոյլ տուր գնամ ձիդ լծեմ։ Մինչև դու կամաց-կամաց տուն հասնես՝ ես կըվազեմ և ամեն ինչ կըպատրաստեմ։ Եւ Ստեփանը պատասխանի չսպասելով՝ վազեց դէպի քեռանց տուն։

—Երանի թէ քեռակինը չթակի ինձ, ծիծաղելով մտածում էր Ստեփանը. գալիս նրան շատ վախեցրի։ Նա շատ բարկացկոտ է. Պարոյրին նրա մօտ չեմ տանի. կասեմ քեռուն, որ ուղղակի աղայի տուն բերի։ Ես գիտեմ, նրանք Պարոյրին կըխնամեն և հօրն ու մօրն էլ իմաց կըտան։ Օ՜հ, փառք Աստուծոյ, մի քիչ սիրտս թեթևացաւ, Պարոյրն էլ սաստիկ կուրախանայ։

ԺԱ

ՊԱՐՈՅՐԸ ԱՂԱՅԻ ՏԱՆԸ

Մի կէս ժամից յետոյ Ստեփանը սայլակում նըստած, ձիու սանձը ձեռին, քեռու հետ միասին ճանապարհ ընկաւ դէպի անտառը։

Ճանապարհին քեռին բոլոր մանրամասնութիւններն իմացաւ, ուստի շտապով առաջ էր գնում՝ վախենալով մի գուցէ մենակ մնացած Պարոյրին մի բան լինի պատահած։

Երբ նրանք մօտեցան անտառապահի խրճիթին՝ Վրթանէս քեռին ձին ծառին կապեց, իսկ Ստեփանն առանց սպասելու շտապով իջաւ սայլից և վազեց խրճիթը։ Պարոյրն անշարժ պառկած էր կիսաբաց աչքերով. կողքին դրած թէյն ու հացին բոլորովին ձեռք չէր տուել։ Ստեփանը բարձրաձայն հեկեկալով դուրս վազեց խրճիթից։

—Քեռի ջան, տես, նա մեռնում է, աղաղակում էր Ստեփանը։ Խեղճը յոգնածութիւնից և քաղցից իրան կորցրել էր. երեսը դեռանը դէմ տուած՝ աղիողորմ լաց էր լինում։ Այդ ժամանակ Վրթանէսը ներս

մտաւ խրճիթը, մօտեցաւ հիւանդին, ձեռքը բռնեց և ճակատը շօշափեց։ Պարոյրը կրակի պէս այրւում էր և տնքում։

—Է՜, Ստեփան լաւ, ինչ ես գոռում. գնա՛ մի դոյլ սառը ջուր բեր, դէ՛ շո՛ւտ արա։ Տաքութիւնը սաստիկ է, ինքը թոյլ երեխայ է երևում խեղճը։ Աստուած ոչ անի, բայց եթէ մեռնի այստեղ, ինչ դժբախտութիւն կլինի, ինքն իրան ասում էր Վրթանէսը։

Ստեփանն շտապով կատարեց քեռու հրամանը։ Երբ ջուրը բերեց, Վրթանէսը երեսրբիչը թաց արեց, քամեց և դրեց հիւանդի ճակատին. յետոյ սայլակի մէջ խոտից փափուկ անկողին պատրաստեց և Պարոյրին տարաւ մէջը պառկեցրեց. Սպեփանին էլ հրամայեց մի դոյլ ջուր վերցնել, նստել Պարոյրի կողքին և շուտ-շուտ հիւանդի գլուխը թրջել. իսկ ինքը բռնեց ձիու սանձը և զգուշութեամբ անտառից դուրս եկաւ։

—Քեռի, ուղղակի աղայենց մօտ գնանք, նրանք կըբժշկեն սրան։

—Դու ինձ մի սովորեցնի, ինքս էլ լաւ գիտեմ, թէ ինչ պէտք է անեմ։

Ստեփանը հանգստացաւ և սկսեց շուտ-շուտ թրջել Պարոյրի գլխի շորը։

Երբ աղայի տունը հասան՝ Ստեփանը մնաց Պարոյրի մօտ, իսկ Վրթանէսը ներս գնաց և բոլորը մանրամասն պատմեց։ Մ'իքանի բոպէից յետոյ դուրս

եկան տիկին Սրբուհին և իւր աղախինները, մօտեցան սայլակին, որ Պարոյրին տեսնեն։

—Աստուած իմ, այս ինչ դրութեան մէջ է խեղճ երեխան. ուշքը վրան չէ. ինչպէս նիհար է, ձեռքերը կատարեալ չօփի նման են։ Ստեփան, այդ դո՞ւ ես. որտեղ ես գտել այս փոքրիկին. սակայն այդ պատմութիւնը յետոյ. դու երևի քաղցած ես, գնա՛ խոհանոց, մի բան կեր և հանգստացիր։ Վրթանէս, դու գնա՛ իսկոյն հիւանդանոց և մի բժիշկ բեր, հիւանդութիւնն էլ մանրամասն պատմիր բժշկին, որպէսզի հարկաւոր դեղերը հետը բերէ։

Պարոյրին սայլակից զգուշութեամբ վերցրին և ներս տարան մի հով, յարմար սենեակ, վրայի շորերը փոխեցին և մաքուր ու փափուկ անկողնում պառկեցրին. գլխին սառուց դրին, ոտներին էլ մանանեխ կպցրին։

Շուտով ծերունի բժիշկը եկաւ, քննեց Պարոյրին և յայտնեց, որ երեխայի դրութիւնը շատ վտանգաւոր է։

Տիկին Սրբուհին հարազատ մօր նման խնամում էր հիւանդին։

Երբ Ստեփանը կշտացաւ ու մաքրուեց՝ տիկին Սրբուհին կանչեց նրան և սկսեց հարց ու փորձ անել Պարոյրի մասին։ Եւ Ստեփանը մի առ մի պատմեց ինչ որ գիտէր։

—Դու ասում ես, որ Պարոյրի ծնողները քաղաքի մեծ փողոցումն են ապրում, բայց ինչպէս է նրանց ազգը։

—Այդ մասին ես Պարոյրին բոլորովին չեմ հարցրել։

—Երևակայում եմ սրա ծնողների դրութիւնը. խեղճերը ինչպէս շփոթուած կըլինեն. երևի ոստիկանութեանն էլ յայտնել են իրանց որդու կորուստը։ Աղան ինքը այսօր քաղաք է գնալու. երևի կրկարողանայ գտնել Պարոյրի ծնողներին։ Բայց դու ինչու էիր քաղաք գնացել։

—Ես ուզում էի ինձ համար մի տեղ գտնել ծառայելու։

—Ապա ինչու չեկար ինձ մօտ կամ աղայի մօտ. մենք քեզ կօգնէինք, ասաց տիկին Սրբուհին։

—Ես չէի համարձակւում ձեզ դիմել։

—Այժմ ինչ ես մտադիր անելու։

—Չգիտեմ. Պարոյրը խոստացաւ խնդրել իւր հօրը, որ ինձ վարձէ. ես էլ սաստիկ սիրեցի այս փոքրիկին, շատ եմ ցաւում դրա համար։ Թոյլ տուէք խնդրեմ, տիկին մի ներս գնամ նրան տեսնեմ։

—Նա դեռ այնքան լաւ չէ. երբ ուշքը վրան գայ, դու պէտք է անպատճառ մօտը լինես, ապա թէ ոչ նա մեզանից ոչ մէկին չէ ճանաչում։ Խեղճը շարունակ զառանցում է և կարծում է, թէ իւր մայրն եմ։

—Ա՜խ Աստուած, երանի թէ մի շուտ լաւանայ։

—Վրթանէս անտառապահը խնդրում է, որ քեզ իրան օգնական նշանակենք, ասաց տիկինը. ուզո՞ւմ ես դու այդ պաշտօնը։

—Շատ շնորհակալ կըլինեմ ձեզանից տիկին, ասաց Ստեփանը։

—Ես լսել եմ, որ դու գրել կարդալ էլ գիտես. ահա քեզ գիրք. գնա առայժմ խոհանոց, նստիր կարդա. երբ հարկաւոր լինես, կրկանչենք։

Ստեփանը ուրախութեամբ վերցրեց գիրքը և դուրս գնաց, իսկ տիկին Սրբուհին մտաւ առանձնասենեակը, որպէսզի բոլոր լսածները պատմէ ամուսնուն և ապա նրա համար ճանապարհի իրերը պատրաստէ։ Պարոն Աբգարը շտապով ճաշեց ու հրամայեց կառքը լծել. ապա տիկին Սրբուհուն ու երեխաներին մնաք բարև ասելուց յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի քաղաք։

ԺԲ

ՊԱՐՈՅՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Պարոյրի կորչելու օրը դայեակը տուն վերադառնալիս՝ մտաւ քաղցրեղէնի խանութը՝ խոստացած կարկանդակները գնելու և ապա շտապով քայլերն ուղղեց դէպի տուն, որ շուտով իւր սիրելի Պարոյրին կերակրէ, կարկանդակներով թէյ խմեցնէ և ապա հետը խաղայ և ուրախացնէ։

Դայեակը մտաւ տուն, գլխի շալը յետ արաւ և կամաց մտաւ մանկանոցը, որ տեսնէ ինչով է զբաղուած Պարոյրը։ Բայց Պարոյրն այնտեղ չկար։ Դայակը մտաւ սեղանատուն ու սկսեց սեղանը պատրաստել Պարոյրի համար, և կարծելով թէ նա թագ է կացել՝ սկսեց կանչել և փնտռել նրան։ Ննջարանում տեսաւ Պարոյրի տանու շորերը թափթափած, իսկ նորերը այլևս այնտեղ չէին։

—Ոյ դու չարաճճի, ասաց դայեակը, զուգուել ես ու թագ կացել։ Պարոյր, ուր ես. դէ ձայն հանիր սիրելիս. ես արդէն յոգնեցի քեզ փնտռելով, դուրս եկ, ճաշելու ժամանակ է։ Քեզ համար կարկանդակներ եմ բերել, տես ես կուտեմ. ինչու ես շորերդ կեղտոտում, դուրս եկ, ուր ես։

Այսպէս կանչելով՝ դայեակը բոլոր կահկարասիքի տակերն ու անկիւնները դիտեց, նայեց։

—Մարիամ, ասաց դայեակը խոհարարուհուն, չգիտես արդեօք Պարոյրն ուր է։

—Ես սենեակները չեմ մտել, չգիտեմ։

—Տէր ողորմեա, այս ինչ պատիժ է. չլինի թէ դուրս է գնացել փողոց, շփոթուում էր դայեակը։

Երբ նկատեց, որ Պարոյրի գլխարկն ու ձեռնափայտն էլ չկան՝ շտապով ներքև վազեց, որ դռնապանի կնոջը հարցնէ. բայց նա էլ չէր տեսել Պարոյրին։ Դայեակը գլուխը կորցրած այս ու այն կողմն ընկաւ—էլ փողոց, էլ հարևան չմնաց, ամեն տեղ փընտռեց ու հարցրեց։

Երբ դռնապանը տուն եկաւ և իմացաւ պատահած անբախտութիւնը՝ իսկոյն գնաց Պարոյրի կնքահօր տունը, ուր հիւր էին գնացել Հայկազեանները։ Հէնց նոյն րոպէին Պարոյրի հայրը կնոջն ու աղջկան թողնելով այնտեղ, ինքը պատրաստուում էր տուն գալու, որպէսզի Պարոյրին առնէ, տանէ կնքահօր մօտ, եթէ միայն նա ներողութիւն կըխնդրէ իւր կամակորութեան համար։

Պարոն Հայկազեանը երբ մօտեցաւ իրանց տանը՝ նկատեց որ այնտեղ մի իրարանցում կայ. բոլոր ծառաները, դռնապանները, հարևանները և անցորդները հաւաքուել են, ասում-խօսում են։

Երբ դայեակը պարոնին տեսաւ, արտասուքնե-

ըից ուռած աչքերով ընկաւ նրա առաջ և աղաղակեց.

—Աղա ջան, ոչ մի տեղ չեմ գտնում նրան, տանից փախել է, չգիտեմ ո՞րտեղ փնտռեմ։

—Ի՞նչ է պատահել, ո՞վ է փախել, հարցրեց պարոն Հայկազեանը։

—Պարոյրը չկայ, վա՛յ գլխիս. եթէ նա կնքահօր մօտ չէ, էլ կասկած չկայ, որ երեխին գողացել են։ Ի՞նչ անեմ հիմա, գլուխս ո՞ր քարին տամ։

—Դժուա՛ր ես ինչ է. ինչ ես ասում, Նազլու, երևի նա թագ է կացել, որ քեզ վախեցնէ։

—Տեղ չմնաց, աղա ջան, ամեն ծակ ու ծուկը մարդ եկայ, փնտռեցի, բայց չգտայ։ Ձփոթուած հայրը շտապ-շտապ բարձրացաւ սանդուխքով և տեսաւ, որ սենեակները խառնած են, բոլոր կահկարասիքը տեղահան արած։ Այդ ժամանակ նա համոզուեց, որ տանը երեխին շատ են փնտռել, բայց չեն գտել։

Մինչդեռ պարոն Հայկազեանը ծառաներին այս ու այն կողմն էր ուղարկում փնտռելու և ինքն էլ ուզում էր ոստիկանատուն գնալ, եկաւ Պարոյրի մայրը, քոյրը և նրանց յետևից կնքահայրը։

Կարող էք երևակայել, թէ ինչ իրարանցում ընկաւ ամբողջ տան մէջ և ինչ անհանգիստ դիշեր անց կացրին ծնողներն ու բոլոր տանեցիք, երբ տեսան, որ Պարոյրին ոչ մի տեղ չեն կարողանում գտնել։

Երկու օրից յետոյ Հայկազեանները իմացան, որ Պարոյրը եղել է այգումը, երեխաների հետ ձի-ձի է խաղացել, կեռաս է գնել ու կերել, յետոյ տեսել են,

որ Պարոյրի հետ մի գիւղացի տղայ էլ է եղել. բայց թէ յետոյ ուր են գնացել կամ ինչ են եղել, այդ ոչոք չգիտէր։

Պարոյրի խեղճ մայրը վշտից հիւանդացաւ. դայեակն ու Հեղինէն անդադար լաց էին լինում։ Պարոն Հայկազեանը տխուր-տրտում այս ու այն կողմ ընկնելով որոնում էր իւր որդուն։

Այսպէս անցան եօթ երկար ծանր օրեր։ Երբ պարոն Աբգարը քաղաք եկաւ, գնաց ոստիկանատուն և իմացաւ, որ իսկապէս Հայկազեանների եօթը տարեկան երեխան կորել է, իսկոյն վերցրեց նրանց հասցէն և կառքը քշել տուեց դէպի նրանց տունը։

Դժուար է նկարագրել Հայկազեանների ուրախութիւնն ու շփոթութիւնը, երբ պարոն Աբգարը յայտնեց, թէ Պարոյրը գտնուած է, միայն հիւանդ է։

Պարոյրի ծնողները վճռեցին իսկոյն պարոն Աբգարի հետ նրա կալուածքը գնալ։

—Խնդրում եմ, մի վրդովուէք և մի տխրէք. Աստուած ողորմածէ, ձեր երեխան շուտով կառողջանայ։ Հաւատացնում եմ, ինչ կարող էինք, ամեն բան արինք ձեր երեխայի համար. արդէն բժիշկը եկաւ տեսաւ հիւանդին. կինս էլ առանց հեռանալու նստած է երեխայի մօտ և խնամում է։ Մեր տունը բաւական մեծ է և շատ ուրախ կըլինենք, եթէ դուք բոլորդ գաք մեզ մօտ մինչև Պարոյրը առողջանայ, որովհետև այժմ նրան տեղափոխելը վտանգաւոր է։ Իսկ ձեր փոքրիկ օրիորդի համար էլ երկու ընկերու-

հիներ կան մեր տանը, որոնք շատ կուրախանան այդպիսի փոքրիկ հիւրի գալուն։

—Ի՞նչ կերպ յայտնեմ ձեզ իմ շնորհակալութիւնը, բարեսիրտ պարոն, արցունքն աչքերին ասում էր պարոն Հայկազեանը։ Սիրելի Աշխէն, ասաց նա կնոջը, հրամայիր բոլոր հարկաւոր շորերը դարսեն քեզ և Հեղինէի համար. դուք մինչև Պարոյրի լաւանալը կըմնաք պարոն Արգարի տանը։

Մի ժամից յետոյ պարոն Արգարը և Հայկազեանները կառքով ճանապարհ ընկան։ Երբ կառքը հասաւ կալուածքին, տիկին Սրբուհին դուրս եկաւ հիւրերին ընդունելու։ Քնքշութեամբ փաթաթուեց նա տիկին Աշխէնին և ամեն կերպ աշխատում էր քաջալերել նրան։ Նրա գեղեցիկ աղջիկները՝ տասը տարեկան Նունէն և տասերկու տարեկան Մանէն սիրով ընդունեցին Հեղինէին. տարան իրանց սենեակը և մի քանի բոպէից բոլորովին բարեկամացան։

Պարոն Արգարը և պարոն Հայկազեանը գնացին Պարոյրի սենեակը. այդ ժամանակ բժիշկը դուրս գալով՝ պատահեց նրանց և ասաց, որ երեխան հանգստացել ու քնել է և յոյս կայ որ լաւանայ։

—Երբ այս քնից յետոյ երեխան ուշքի գայ, ասում էր բժիշկը, լաւ կըլինի, որ նրա մօտ լինի այն գիւղացի տղան, որի հետ նրան այստեղ էք բերել. թող նա զգուշութեամբ յայտնէ հիւանդին, որ ծնողները եկել են։

Այսպիսով որոշուեց հիւանդին տեսնելը յետաձգել մինչև միւս առաւօտը։ Խեղճ ծնողները դրան

ճեղքից միայն կարողանում էին նայել իրանց սիրելի որդուն։

Ստեփանը մաքուր շորեր հագած, լուացուած ու սանրուած երբ ներս եկաւ, Հայկազեանները շատ հաւանեցին նրան, սկսեցին մանրամասն հարց ու փորձ անել Պարոյրի գլխին եկած արկածների մասին։

Ստեփանը պատմութիւնը վերջացրեց և ապա հանդարտ քայլերով, գիրքը ձեռին՝ գնաց նստեց հիւանդի մօտ, որ ճշտութեամբ կատարէ իրան յանձնած հիւանդապահի պաշտօնը։

ԺԳ

ՊԱՐՈՅՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Միւս առաւօտ, երբ Պարոյրը զարթեց և տեսաւ Ստեփանին՝ ճանաչեց և չափից դուրս ուրախացաւ, մինչև անգամ նկատեց նրա նոր շորերը։

Ստեփանը կաթ խմեցրեց նրան և ապա սկսեց կամաց-կամաց իրանց գլխով անցածները պատմել. թէ ինչպէս Վրթանէս քեռին նրան գիւղ բերեց, ինչպէս նրան այս սենեակը բերին և պառկեցրին, ինչպէս ծնողներին իմաց տուին և թէ նրանք էլ երէկ երեկոյեան եկել են և սաստիկ փափագում են իրան տեսնել։ Պարոյրը սկզբում լսում էր, կարծելով թէ մի հեքիաթ են պատմում. բայց վերջը գլխի ընկաւ և շփոթուած ասաց.

—Ստեփան, դու այդ բոլորը ուղիղ ես ասում։

—Բոլորն ուղիղ եմ ասում, սիրելիս, մի՞թէ դու ոչինչ չես յիշում։

—Ստեփան, ճիշտ ես ասում, որ հայրիկս ու մայրիկս եկել են։ Նրանք ինձ վրայ բարկացած չեն արդեօք։

—Ինչ բարկանալու ժամանակ է. նրանք անչափ ուրախ են, որ քեզ գտել են։

—Ստեփան, սիրելիս, կանչիր շուտ նրանց ինձ մօտ։

—Այո, իմ աչքի լոյս, մենք այստեղ ենք, ասաց մայրը ներս մտնելով. խեղճ զաւակս, միայն դու շո՛ւտ առողջացիր։

Տիկին Աշխէնը մօտեցաւ հիւանդ որդուն և սկսեց համբուրել նրա նիհարած ձեռքերը։

—Իսկ հայրիկը, արդեօք նա չէ՞ բարկանում, նա ինձ կընե՞ր է. փաթաթուելով մօրը ասում էր Պարոյրը, ես այլևս երբէք կամակորութիւն չեմ անի, մայրիկ ջան։

—Իհարկէ կընե՞ր եմ, իմ անխելք փոքրիկս, ուրախաղէմ ասաց հայրը, որ Պարոյրի մահճակալի մօտ կանգնած՝ վաղուց նայում էր իւր փոքրիկ կամակորին։

—Հայրիկ ջան, ինչպէս ուրախ եմ հիմա. ես ձեզ շատ եմ սիրում։

—Դէ՞ այժմ բաւական է, հանգիստ պառկիր. շատ խօսել չէ կարելի, ասաց բժիշկը ներս մտնելով. երբ կառողջանաս՝ դու ինձ «կապիկն ու ակնոցը» բերանացի կասես. ես վաղուց մոռացել եմ, իսկ դու ասում են, շատ լաւ ես իմանում։

Պարոյրը ժպտաց, համբուրեց մօր ձեռքը, փաթաթուեց հօրը և գոհ հայեացքով դարձաւ Ստեփանին.

—Տեսնում ես Ստեփան, ինչ բարի հայրիկ և մայրիկ ունեմ։ Կանչեցէք Նազլուին, Հեղինիկին և վարժուհուն, ես ուզում եմ նրանց տեսնել։

—Ո՞չ Պարոյը ջան, ծիծաղելով ասաց մայրը, դու այժմ հանգիստ պառկիր և եթէ կարող ես. քնիր, Հեղինէն յետոյ կրգայ քեզ մօտ. իսկ Նազլուն և վարժուհին քաղաքում մնացին։

—Հայրիկ ջան, քեզ մի գաղտնիք ունեմ ասելու և մի լուրջ խնդիր, ասաց Պարոյրը։

—Յետոյ, յետոյ զաւակս, աւելի լաւ է այժմ քիչ քնիր։ Դուրս գնանք այստեղից Աշխէն։ Թող Պարոյրը քնի։ Եւ ամենքը բացի Ստեփանից դուրս եկան սենեակից։

Այդ օրից Պարոյրն սկսեց լաւանալ։ Վերջապէս Պարոյրը իւր գաղտնիքն ու լուրջ խնդիրը յայտնեց հօրը. նա խնդրեց, որ Ստեփանին իրանց մօտ պահեն։ Հայրիկը ուրախութեամբ կատարեց իւր որդու խնդիրը։ Յետոյ երբ պարոն Հայկազեանը նկատեց Ստեփանի բարեսրտութիւնը, սրամտութիւնը և ընդունակութիւնը՝ վճռեց նրան ուսումնարան տալ։

Վրթանէս քեռուն պարոն Հայկազեանը մի լաւ հրացան ընծայեց, իսկ Պարոյրը Ստեփանի խորհրդով, իւր մի րուբլով նրա համար մի գրուանքայ ծխախոտ գնեց։

Պարոյրը իւր հիւանդութիւնից յետոյ «Կապիկն ու ակնոցը» առակը շատ լաւ սովորեց և երբ վարժուհու մօտ ասաց. նա ուրախացաւ և համբուրեց Պարոյրին։ Աշնանը կնքահայրը մի լաւ մանկական խնճոյք սարքեց։ Այդ օրը Պարոյրը, Ստեփանը, Հեղինէն, Նունէն և Մանէն չափից դուրս ուրախ անց

կացրին։ Կենդանի պատկերներ էին սարքում Պարոյրի արկածներից և ծիծաղում ու ուրախանում։

Պարոյրը երբ մեծացաւ և ուսումը աւարտեց, շատ լաւ և խելօք մարդ դարձաւ։ Ստեփանն էլ մեծացաւ, բժշկութիւն սովորեց և յայտնի մանկական բժիշկ դարձաւ։

Ստեփանին Հայկազեանները շատ էին սիրում և այդպէս սիրով էլ մնացին մինչև վերջը։

Շատ-շատ անգամ յիշում էին նրանք իրանց անտառում մոլորուելու պատմութիւնը և զուարճանում էին։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публичная Библиотека
7/XI—1922
Մ. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄՈՍԿՎԱ

3

16 20

Գինն է 15 կ.

Կաճառում է Հնատրոնական, Կոմկական եւ Գոր
ծնական գրախաճառանոցնեում.